

տիկի գեղաքանդակ պալատներու հիմերուն, որոնք ջուրին ու ցեխին տակ առնուած՝ անծանօթ ու անյայտ ցիցեր են լույս, կան ու չկան, եւ սակայն անոնց վրայ կը կանգնին տոժական հոյակապ կամ երկնապող զանգակատուններու քարաշէն հրաշալիքները:

Մխիթարի այս քերականութիւնն ալ, իր 1000 կամ 1500 օրինակներով, ունեցաւ նման հիմնական դեր՝ մեր արեւմտահայ աշխարհաբարի կազմաւորման մէջ:

Վենետիկի ժամանակագրութիւններուն մէջ՝ Երբեմն կը պատմուի որ ճարտարապետ մը, շինուելիք ջքնաղ տաճարի մը հիմերը ձգելէն ետք, այսինքն՝ տասնեակ հազարաւոր հակայ ցիցեր ցեխին մէջ դարնել տալէն ետք, երկար տարիներ ինք անյայտացած է՝ յետաձգելու համար չէնքին քուն կառուցումը, ժամանակ տալով որ հիմերը սմբանան ու հաստատուին՝ ծովուն տակ:

Մխիթարի այս քերականութիւնն ալ ճիշտ նման բախտի է վիճակուած, դարձանալիօրէն:

Աշխարհաբարի հիմնարկէքը կատարուած է. տակայն, չէնքը բարձրացնելու համար՝ տակաւին հարկւր տարի պէտք պիտի ըլլայ:

(Շար. 3)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԾԱՆՕԹ. — Մեր ոստամնասիրութիւնն ամբողջացնող յաջորդ մասերը պիտի ըլլան.

— Մխիթար Աբրահօր «Քրիստոնէական»ին աշխարհաբարը.

— Համեմատութիւններ՝ 1687ին տպուած Սաղմոսներու աշխարհաբար մեկնութեան մը հետ.

— Ուսումնասիրութիւն եւ քննութիւն՝ Մխիթար Աբրահօր աշխարհաբարի անտիպ Քերականութեան, գրուած՝ աշխարհաբար հայերէնով.

— Բնագրի հրատարակութիւն՝ նոյնին:

Սակայն, պատշաճ համարեցանք, գոհացում տալու համար մեր բանասէր ընթերցողներու արդար հետաքրքրութեան, այժմէն իսկ հրատարակութեան յանձնել, «Բազմավէպ»ի ներկայ թիւին յաջորդ էջերուն մէջ, վերոյիշեալ ցանկին վերջին բաժինը, այսինքն՝ Մխիթար Աբրահօր աշխարհաբարի անտիպ քերականութեան բնագիրը, իր երկու մասերով, ամբողջապէս շարադրուած՝ աշխարհաբար հայերէնով:

Հ. Ն. Տ. Ն.

ՄԽԻԹԱՐ ԱՐԲԱՆԱՅՐ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒՆ ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԴՈՒՌՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

1ա

ԳԼՈՒԽ Ա.

ԹԵ ԻՆՉՊԷՍ ԵՒ ՔԱՆԻ՝ ԿԵՐՊՈՎ ԿՈՒ ՀՈԼՈՎԻՆ ԱՆՆՆԵՐՆ

1. Վասն լաւ դիտնալու, թէ մեր աշխարհաբար լեզուն մէջ անըններն ինչպէս կու հոլովին, պէտք է որ լաւ մտաց մէջ առնել այս իրեք կերպ հոլովին, որ իրենց ներքեւ շատ անըններ ունին:

Ա.

2. ԱՌԱՋԻՆ ԿԵՐՊԻՆ եղական սեռականն ինի դրով կու վերջանայ. ինչպէս՝ հաց — հացի, մանկաղ — մանկաղի: Եւ յոգնա՝ կանի ուղղականն, եթէ անունն մէկ վանկով է, եր կու վերջանայ, ինչպէս՝ հացեր. եւ թէ անունն շատ վանկով, ներ կու վերջանայ. ինչպէս՝ մանկաղներ: Եւ իրենց սեռականն կու լինի հացերու. մանկաղներու, ինչպէս այս երկու օրինակա կու ցուցանեն.

	Եզակի	Յոգնական
Ուղղական	Հաց	Հացեր
Սեռական	Հացի	Հացերու
Տրական	Հացին	Հացերուն
Հայցական	Հացը	Հացերը
Բացառական	Հացէն	Հացերուն
Գործիական	Հացով	Հացերով

	Եզակի	Յոգնական
Ուղ .	Մանկաղ	Մանկաղներ
Սեռ .	Մանկաղի	Մանկաղներու
Տրկ .	Մանկաղին	Մանկաղներուն
Հայ .	Մանկաղը	Մանկաղները
Բաց .	Մանկաղէն	Մանկաղներուն
Գոր .	Մանկաղով	Մանկաղներով

1p Ասոնցպէս կու հոլովին շատ անըններ, ինչպէս ասոնք. քար - քարի, կրակ - կրակի, մաղ - մաղի, թեւ - թեւի, մաղձ - մաղձի, երակ - երակի, գետ - գետի, լերդ - լերդի, ակռայ - ակռայի, խաչ - խաչի, պատարադ - պատարադի, խորոված - խորովածի, սեւ - սեւի, լայն - լայնի, նեղ - նեղի, երկան - երկանի, կարճ - կարճի, լաւ - լաւի, աշխարհական - աշխարհականի, կրօնաւոր - կրօնաւորի, տիրացու - տիրացուի, կեղտոտ - կեղտոտի, պարտիզական - պարտիզականի, առաջնորդ - առաջնորդի, լսող - լսողի, տեսած - տեսածի, կարագ - կարագի:

3. Բայց գիտնալ պէտք է, որ թէպէտ շատ անըններ կան, որ ասոնցպէս կու հոլովին, բայց հոլովինին՝ գիր կու պակասի իրենց միջէն, ինչպէս ահա այս երկու օրինակս կու ցուցանեն.

	Եզակի	Յոգնական
Ուղ .	Թողթ	Թողթեր
Սեռ .	Թողթի	Թողթերու
Տրկ .	Թողթին	Թողթերուն
Հայ .	Թողթը	Թողթերը
Բաց .	Թողթէն	Թողթերուն
Գոր .	Թողթով	Թողթերով

	Եզակի	Յոգնական
Ուղ .	Գետին	Գետններ
Սեռ .	Գետնի	Գետններու
Տրկ .	Գետնին	Գետններուն
Հայ .	Գետնը	Գետնները
Բաց .	Գետնէն	Գետններուն
Գոր .	Գետնով	Գետններով

Ասոնցպէս կու հոլովին շատ անըններ, ինչպէս ասոնք. բամպակ - բամպակի, բիր - բիրի, ջուր - ջրի, լեզու - լեզուի, սիրտ - սրտի, գիրդ - գրդի, բերան - բերնի, քիթ - քիթի, ականջ - ականջի, կռնակ - կռնկի, պուկունք - պուկնքի, աղբուր - աղբրի, միս - մսի, ապուր - ապրի, ճերմակ - ճերմկի, կարմիր - կարմրի, դեղին - դեղնի, ոսկէրիչ - ոսկէրչի, միտք - մտքի, կուրծք - կրծքի, մուր - մրի, ծուռ - ծուի, կուռք - կուքի, մոխիր - մոխրի, թուր - թքի:

2ա 4. Դարձեալ գիտնալ պէտք է, որ շատ անըններ ալ կան, որ հոլովինին գիր կու փոխւի, իրենց միջէն, ինչպէս ահա այս երկու օրինակս կու ցուցանեն.

	Եզակի	Յոգնական
Ուղ .	Դէզ	Դիզեր
Սեռ .	Դիզի	Դիզերու
Տրկ .	Դիզին	Դիզերուն
Հայ .	Դէզը	Դիզերը
Բաց .	Դիզէն	Դիզերուն
Գոր .	Դիզով	Դիզերով

	Եզակի	Յոգնական
Ուղ .	Սրտագիտ	Սրտագիտներ
Սեռ .	Սրտագիտի	Սրտագիտներու
Տրկ .	Սրտագիտին	Սրտագիտներուն
Հայ .	Սրտագիտը	Սրտագիտները
Բաց .	Սրտագիտէն	Սրտագիտներուն
Գոր .	Սրտագիտով	Սրտագիտներով

Ասոնցպէս կու հոլովին շատ անըններ, ինչպէս ասոնք. գէշ - գիշի, կանանչ - կանընչի, ձկնեղէն - ձկնեղինի:

5. Եւ այս տեղս գիտնալ պէտք է, որ այս հոլովիս ներքեւ կան անըններ, որ իրենց եղակի հայցականն եւ բոլոր յոգնականն ուրիշ կերպ կու լինին, ինչպէս այս օրինակս.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Տղայ	Տղաք
Սեռ.	Տղի	Տղոց
Տրկ.	Տղին	Տղոցն
Հայ.	Տղան	Տղաքը
Բաց.	Տղէն	Տղոցմէն
Գոր.	Տղով	Տղոցմով

6. Դարձեալ գիտնալ պէտք է, զի այն անըններն, որ ձայնաւոր դրով կու վերջանան, իրենց եղակի հայցականն և գրով պիտի եղերի, ինչպէս քահանայ - քահանայի - քահանամ:

7. Դարձեալ գիտնալ պէտք է, որ մէկ քանի անըններ կան, որ երկու կերպ կու հոլովի իրենց եղականն, եւ մէկ կերպն այս հոլովիս ներքեւ կու անկանի, ինչպէս են ասոնք. ձեռք - ձեռքի կամ ձեռաց, ոտք - ոտքի կամ ոտից, խելք - խելքի կամ խելաց, թիկունք - թիկունքի կամ թիկնաց, կուրծք - կրծքի կամ կրծոց:

Բայց իրենց յոգնականն մէկ կերպ կու հոլովի, որ է այս. ձեռքեր - ձեռքերու, ոտքեր - ոտքերու:

Բ.

8. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՐՊԻՆ Եղական սեռականն ու վանկովս կու վերջանայ, ինչպէս հաւ - հաւու, առաւօտ - առաւօտու: Եւ յոգնականի ուղղականն, թէ անունն մէկ վանկով է՝ եր կու վերջանայ, ինչպէս՝ հաւեր: Եւ թէ շատ վանկով է՝ ան կու վերջանայ, ինչպէս՝ առաւօտներ: Եւ սեռականն կու լինի հաւերու, առաւօտներու, ինչպէս՝ այս երկու օրինակս կու ցուցանեն.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Հաւ	Հաւեր
Սեռ.	Հաւու	Հաւերու
Տրկ.	Հաւուն	Հաւերուն
Հայ.	Հաւը	Հաւերը
Բաց.	Հաւուն	Հաւերուն
Գոր.	Հաւով	Հաւերով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Առաւօտ	Առաւօտներ
Սեռ.	Առաւօտու	Առաւօտներու
Տրկ.	Առաւօտուն	Առաւօտներուն
Հայ.	Առաւօտը	Առաւօտները
Բաց.	Առաւօտուն	Առաւօտներուն
Գոր.	Առաւօտով	Առաւօտներով

2բ Ասոնցպէս կու հոլովին շատ անըններ, ինչպէս ասոնք. Ժամ - Ժամու, կով - կովու, շաբաթ - շաբաթու, ծով - ծովու, դայ - դայու, ուլ - ուլու, ցաւ - ցաւու, արջ - արջու, որձ - որձու, հով - հովու, ձագ - ձագու, սով - սովու, նախանձ - նախանձու, թի - թիու, մարդ - մարդու, Սպահան - Սպահանու:

9. Դարձեալ գիտնալ պէտք է, զի շատ անըններ ալ կան, որ հոլովին չեն՝ դիւր կու պակասի իրենց միջէն, ինչպէս այս երկու օրինակս մէջ կերելին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Յուրտ	Յրտեր
Սեռ.	Յրտու	Յրտերու
Տրկ.	Յրտուն	Յրտերուն
Հայ.	Յուրտը	Յրտերը
Բաց.	Յրտուն	Յրտերուն
Գոր.	Յրտով	Յրտերով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Տարի	Տարիներ
Սեռ.	Տարու	Տարիներու
Տրկ.	Տարուն	Տարիներուն
Հայ.	Տարին	Տարիները
Բաց.	Տարուն	Տարիներուն
Գոր.	Տարով	Տարիներով

30ա Ասոնցպէս կու հոլովին շատ անըններ, ինչպէս ասոնք. դարի - դարու, ամիս - ամսու, դատի - դատու, ջորի - ջորու, քամի - քամու, մօրթի - մօրթու, մարմին - մարմնու, խնամի - խնամու, այգի - այգու, պլուխ - պլխու, ածիլի - ածիլու, գործէլի - գործէլու, գերի - գերու, ագի - ագու, գոմէշ - գոմշու, անասուն - անասնու, գինի - գինու, կենդանի - կենդանու, թշնամի - թշնամու, սուրբ - սրբու, լու - լուու, եկեղեցի - եկեղեցու, մատնի - մատնու, որդի - որդու, տանձենի - տանձենու, խելացի - խելացու:

10. Այս տեղս գիտնալ պէտք է, զի այն անունն որ ձայնաւոր գրով կու վերջանայ, հոլովիւնի՝ իւր եղական հայցականն և գրով պիտի վերջանայ, ինչպէս որ ի վերն հոլովեցաւ՝ տարի — տարու, հայցական՝ տարին: Եւ այն անունն որ բաղաձայն գրով կու վերջանայ, իւր եղական հայցականն ը գրով պիտի վերջանայ, ինչպէս որ ի վերն հոլովեցաւ՝ ցուրտ — ցրտու, հայցական՝ ցուրտը: Ասորպէս պիտի իմացուին ուրիշ անուններն ալ:

11. Դարձեալ գիտնալ պէտք է, որ շատ անուններ ալ կան, որ հոլովիւնի՝ գիր կու փոխել իրենց միջէն, ինչպէս այս երկու օրինակիս մէջ կերեւին.

	Եզակի	Յոգնակամ
Ուղ.	Փոր	Փօրեր
Սեռ.	Փօրու	Փօրերու
Տրկ.	Փօրուն	Փօրերուն
Հայ.	Փօրը	Փօրերը
Բաց.	Փօրուն	Փօրերուն
Գոր.	Փօրով	Փօրերով
	Եզակի	Յոգնակամ
Ուղ.	Էրէց	Իրիցներ
Սեռ.	Իրիցու	Իրիցներու
Տրկ.	Իրիցուն	Իրիցներուն
Հայ.	Էրէցը	Իրիցները
Բաց.	Իրիցուն	Իրիցներուն
Գոր.	Իրիցով	Իրիցներով

Ասոնցպէս կու հոլովին շատ անուններ, ինչպէս ասոնք. հորթ — հորթու, պորտ — պորտու, փոշի — փոշու, հոր — հօրու, ձոր — ձօրու, էշ — իշու:

3բ

12. Դարձեալ գիտնալու է, որ այս հոլովիս ներքեւ քանի մի անուններ կան, որ իրենց յոգնականն երկու կերպ կու լինի, ինչպէս են ասոնք. լու — լվու — լվեր — լվերու, նաեւ լինի լվաններ — լվաններու. էշ — իշու — իշեր — իշերու, նաեւ լինի իշվաններ — իշվաններու. թի — թիու — թիեր — թիերու, նաեւ լինի թիաններու. եկեղեցի — եկեղեցու — եկեղեցիներ — եկեղեցիներու, նաեւ լինի եկեղեցիք — եկեղեցեաց. որդի — որդու — որդիներ — որդիներու, նաեւ լինի որդիք — որդուց. մարդ — մարդու — մարդեր — մարդերու, նաեւ լինի մարդիք — մարդոց:

Գ.

13. ԵՐՐՈՐԴ ԿԵՐՊԻՆ. եղական սեռականն ան վանկովս կու վերջանայ, ինչպէս դուռն — դուռն, որդն — որդան. եւ յոգնականներն միշտ կու վերջանան ներ վանկովս, ինչպէս այս երկու օրինակս կու ցուցանեն.

	Եզակի	Յոգնակամ
Ուղ.	Դուռ	Դուռեր
Սեռ.	Դուռն	Դուռերու
Տրկ.	Դուռն	Դուռերուն
Հայ.	Դուռը	Դուռերը
Բաց.	Դուռն	Դուռերուն
Գոր.	Դուռով	Դուռերով

	Եզակի	Յոգնակամ
Ուղ.	Որդն	Որդներ
Սեռ.	Որդան	Որդներու
Տրկ.	Որդան	Որդներուն
Հայ.	Որդը	Որդները
Բաց.	Որդն	Որդներուն
Գոր.	Որդով	Որդներով

4ա

Ասոնցպէս կու հոլովին շատ անուններ, ինչպէս ասոնք. տուն — տան, աղջիկ — աղջկան, ձուկն — ձկան, իրիկուն — իրիկան, շուն — շան, ծունկ — ծնկան, նուռն — նուռն, ամառն — ամառն, ձմեռն — ձմեռն, աղվնիկ — աղվնկան, մոջուճն — մոջման, կռունկ — կռնկան, ճնճղուկ — ճնճղկան, մուկն — մկան, թոռն — թոռան, լեռն — լեռան, նեռն — նեռան, եզն — եզան, գառն — գառան, գորտն — գորտան, փուռն — փուռն:

14. Եւ այս տեղս գիտնալ պէտք է, զի այն անուններն, որ մէկ վանկով են եւ մէջն ու վանկս այս չիկայ, անոնք կու հոլովին ինչպէս՝ որդն — որդան. եւ այն անուններն որ շատ վանկով են, կամ մէկ վանկով են եւ մէջն ունին ու, անոնք գիր պակսեցնելով կու հոլովին, ինչպէս՝ դուռն — դուռն:

15. Դարձեալ գիտնալ պէտք է, զի որքան անուններ կան, որ քիւն վանկով կու վերջանան, այս հոլովիս ներքեւ են, եւ իրենց սեռականն կու լինի քեան. եւ յոգնակի չեն լինիր, ինչպէս այս օրինակս կու ցուցանէ.

Ուղ․	Խէլօքութիւն
Սեռ․	Խէլօքութեան
Տրկ․	Խէլօքութեանն
Հայ․	Խէլօքութիւնը
Բաց․	Խէլօքութենէն
Գոր․	Խէլօքութենով

4բ Ասորպէս կու հոլովին ամէն անըններ, որ իրենց վերջն այս քիւն վանկս ունի, ինչպէս թողութիւն – թողութեան, լաւութիւն – լաւութեան, եւայլն:

16. Դարձեալ գիտնալ պէտք է, որ այս հոլովիս ներքեւ կան անըններ, որ հոլովիլինի՝ դիւր մի կու աւելնայ իրենց, ինչպէս ասոնք. ցերեկ – ցերեկւան, գիշեր – գիշերւան:

17. Նաեւ կան անըններ, որ իրենց յոգնակին ուրիշ կերպ կու լինի, ինչպէս ասոնք. տղեկ – տղեկան – տղակներ – տղակներու, կնիկ – կնկան – կնիկներ – կնիկներու:

ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՍՆ ՈՒՐԻՇ ՄՆԱՑԱԾ ԱՆԸՆՆԵՐՈՒՆ, ՈՐ ՈՒՐԻՇ ԿԵՐՊՈՎ
ԿՈՒ ՀՈԼՈՎԻՆ

18. Հինգ կերպ հոլովիլ ալ կայ, որ իրենց ներքեւը շատ անըններ չունին:

19. Եւ առաջինն այս է.

	Եզակի	Յոգնական
Ուղ․	Տէր	Տիրատիք
Սեռ․	Տիրոջ	Տիրատոց
Տրկ․	Տիրոջն	Տիրատոցն
Հայ․	Տէրն	Տիրատիքը
Բաց․	Տիրոջմէն	Տիրատոցմէն
Կոչ․	Տէ՛ր	Տիրատիք

Ասորպէս կու հոլովին՝ քուր – քուրոջ, մօրքուր – մօրքուրոջ, հօրքուր – հօրքուրոջ:

5ա 20. Բայց կան անըններ, որ թէպէտ իրենց եզականն | ասորպէս կու հոլովի, բայց յոգնակին ուրիշ կերպ կու լինի, ինչպէս ասոնք. կին – կնոջ, յոգնակի՝ կնկտիք – կնկտոց, պարտատէր – պարտատիրոջ, յոգնակի՝ պարտատիրներ – պարտատիրներու. տանտիկին – տանտիկնոջ, յոգնակի՝ տանտիկիններ – տանտիկիններու. տէրտէր – տէրտիրոջ, յոգնակի՝ տէրտիրներ – տէրտիրներու:

21. Նաեւ այս երկու անունս, որ յոգնակի չունին, այս հոլովիս ներքեւ են. աներ – աներոջ, հարսնքուր – հարսնքուրոջ:

22. Երկրորդն այս է.

	Եզակի	Յոգնական
Ուղ․	Աղբար	Աղբրտիք
Սեռ․	Աղբօր	Աղբրտոց
Տրկ․	Աղբօրն	Աղբրտոցն
Հայ․	Աղբարը	Աղբրտիքը
Բաց․	Աղբօրմէն	Աղբրտոցմէն
Կոչ․	Ա՛ղբար	Ա՛ղբրտիք

Ասորպէս կու հոլովին՝ հայր – հօր, մայր – մօր: Բայց իրենց յոգնականն լինի՝ հարեր – հարերու, մարեր – մարերու:

Դարձեալ ասորպէս կու հոլովին՝ աստուածամայր – աստուածամօր, աստուածահայր – աստուածահօր: Բայց ասոնց յոգնակի չիլինիր:

5բ 23. Երրորդն այս է.

	Եզակի	Յոգնական
Ուղ․	Օր	Օրեր
Սեռ․	Աւուր	Օրերու
Տրկ․	Աւուր	Օրերուն
Հայ․	Օրը	Օրերը
Բաց․	Օրէն	Օրերուն
Գոր․	Օրով	Օրերով

Ասորպէս կու հոլովի՝ կէտօր – կէտաւուր: Բայց յոգնական չունի:

24. Չորրորդն այսպէս է, որ յոգնակի չունի, եւ գործիական չունի, բայց ունի զկոչական:

Ուղ.	Տիրուհի
Սեռ.	Տիրուհի
Տրկ.	Տիրուհի
Հայ.	Տիրուհին
Բաց.	Տիրուհիէն
Կոչ.	Ո՛վ տիրուհի

Ասորպէս կու հոլովին՝ սրբուհի – սրբուհէ, Վարդուհի – Վարդուհէ, Եսայի – Եսայէ:

6ա 25. Հինգերորդն այս է. եւ սա ալ յողնակի | եւ դործիական չունի:

Ուղ.	Աղամ
Սեռ.	Աղամայ
Տրկ.	Աղամայ
Հայ.	Աղամը
Բաց.	Աղամայ
Կոչ.	Ո՛վ Աղամ

Ասորպէս կու հոլովին՝ Սէթ – Սէթայ, Քամ – Քամայ, Էրդրում – Էրդրումայ:

26. Եւ գիտնալ պէտք է, զի այն անըններն՝ որ իրենց վերջն եմք վանկս ունին, ուրիշ կերպ կու հոլովին, եւ եզական չունին, ինչպէս այս օրինակս կու ցուցանէ.

Ուղ.	Կիրակոսենք
Սեռ.	Կիրակոսենց
Տրկ.	Կիրակոսենց
Հայ.	Կիրակոսենք

Եւ բացառական կամ դործիական չունին:

Ասորպէս կու հոլովին՝ Պետրոսենք – Պետրոսենց, Մարիամենք – Մարիամենց, եւայլն:

6բ 27. Հարցական անընին հոլովին այսպէս կու լինի.

	Եզակի	Յոգնական	Եզակի
Ուղ.	Ո՛վ կամ ո՞ր	Որո՞նք	Ի՞նչ
Սեռ.	օրո՞ւ	որո՞նց	ինչո՞ւ
Տրկ.	օրո՞ւ կամ ո՞ւմ	որո՞նց	ինչո՞ւն
Հայ.	ո՞վ	որո՞նք	ի՞նչը
Բաց.	յո՞ւմմէ՞	որոնցմէ՞	ինչէ՞ն
Գոր.	որո՞վ	որոնցմով	ինչո՞վ

28. Մասնական անընին հոլովին այսպէս կու լինի.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Մէկմի	Մէկքանի
Սեռ.	մէկմի	մէկքանի
Տրկ.	մէկմի	մէկքանիին
Հայ.	մէկմի	մէկքանին
Բաց.	մէկմի	մէկքանիէն
Գոր.	մէկովմի	մէկքանիով

7ա

ԳԼՈՒԽ Գ.

ՎԱՍՆ ՀՈԼՈՎԻ ԴԵՐԱՆՈՒԱՆ

29. Այս դերանըններն՝ ես, դու, ան, որ զառաջին, զերկրորդ եւ զերրորդ դէմն կու նշանակեն, այսպէս կու հոլովին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Ես	Մենք
Սեռ.	Իմ	մեր
Տրկ.	ընձի կամ ինձ	մեզի կամ մեզ
Հայ.	զիս	զմեզ
Բաց.	յիմէ	մեզմէ կամ մէնէ
Գոր.	ընձմով	մեզնով կամ մէնով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Դու	Դուք
Սեռ.	քու	ձեր
Տրկ.	քեզ կամ քեզի	ձեզ կամ ձեզի
Հայ.	զքեզ	զձեզ
Բաց.	քէնէ կամ քեզմէ	ձէնէ կամ ձեզմէ
Գոր.	քեզմով	ձեզմով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	Ան կամ անի	Անոնք
Սեռ.	անոր	անոնց
Տրկ.	անոր	անոնց
Հայ.	զնա կամ զանի	զանոնք
Բաց.	անկից	անոնցմէ
Գոր.	անով	անոնցմով

7բ 30. Այս դերանըններս աւ, աւ, որ ցոյց կու տան զդէմքն աւ-
ռաջին եւ երկրորդ, այսպէս կու հոլովին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	աւ կամ աւի	ասոնք
Սեռ.	ասոր	ասոնց
Տրկ.	ասոր	ասոնց
Հայ.	զաւ կամ զասի	զասոնք
Բաց.	ասկից	ասոնցմէ
Գոր.	ասով	ասոնցմով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	աւ կամ աւի	ատոնք
Սեռ.	ատոր	ատոնց
Տրկ.	ատոր	ատոնց
Հայ.	զատ կամ զատի	զատոնք
Բաց.	ատկից	ատոնցմէ
Գոր.	ատով	ատոնցմով

31. Այս դերանըններս՝ սա, դա, նա, որ ցոյց կու տան երեք
դիմով զամէն բան, այսպէս կու հոլովին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	սա կամ սի	սլոնք
Սեռ.	սլոր	սլոնց
Տրկ.	սլոր	սլոնց
Հայ.	սա կամ սի	սլոնք
Բաց.	սկից	սլոնցմէ
Գոր.	սլով	սլոնցմով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	դա կամ տի	տլոնք
Սեռ.	տլոր	տլոնց
Տրկ.	տլոր	տլոնց
Հայ.	դա կամ տի	տլոնք
Բաց.	տկից	տլոնցմէ
Գոր.	տլով	տլոնցմով

	Եզակի	Յոգնական
Ուղ.	նա կամ նի	նլոնք
Սեռ.	նլոր	նլոնց
Տրկ.	նլոր	նլոնց
Հայ.	նա կամ նի	նլոնք
Բաց.	նկից	նլոնցմէ
Գոր.	նլով	նլոնցմով

Տա 32. Այս դերանունս՝ իմն, այսպէս կու հոլովին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	ինքն	իրենք
Սեռ.	իրեն կամ իր	իրենց
Տրկ.	իրեն	իրենց
Հայ.	զինքն	զիրենք
Բաց.	իրմէ	իրենցմէ
Գոր.	իրմով	իրենցմով

33. Այս դերանըններս՝ մերոնք, ձերոնք, առանց եզականի, այս-
պէս կու հոլովին.

	Եզակի	Յոգնական
Ուղ.	մերոնք	ձերոնք
Սեռ.	մերոնց	ձերոնց
Տրկ.	մերոնց	ձերոնց
Հայ.	մերոնք	ձերոնք
Բաց.	մերոնցմէ	ձերոնցմէ
Գոր.	մերոնցմով	ձերոնցմով

34. Եւ այս տեղս դիտնալ պէտք է, որ այս երեք դիրս՝ ս, դ, ն,
դէմք զատող են, ինչպէս այս օրինակս կու ցուցանէ. Տունս,
տունդ, տունըն, կամ այսպէս՝ իմ տունս, զու տունդ, անոր տու-
նըն: Ձեռքս, ձեռքդ, ձեռքըն. կամ այսպէս՝ իմ ձեռքս, զու ձեռքդ,
անոր ձեռքըն:

8ր

ԳԼՈՒԽ Դ.

ՎԱՍՆ ԼԾՈՐԴԵԼՈՅ ԶԲԱՅԵՐՆ

35. Նախ ըծորդի էական բայն՝ ԵՄ:

Սահմանականի ներկայ

Եզ. Եմ, Ես, է.

Յոգ. Ենք, էք, Են:

Անկատար

Եզ. էի, էիր, էր.

Յոգ. էանք, էիք, էին:

Կատարեալ

Եզ. Եղայ, եղար, եղաւ.

Յոգ. եղանք, եղաք, եղան:

Յարակատար

Եզ. Եղերեմ, եղերես, եղերէ.

Յոգ. եղերենք, եղերէք, եղերեն:

Գերակատար

Եզ. Եղերէի, եղերէիր, եղերէր.

Յոգ. եղերէանք, եղերէիք, եղերէին:

Ապառնի

Եզ. Ըլլամ, Ըլլաս, Ըլլայ.

Յոգ. Ըլլանք, Ըլլաք, Ըլլան:

Հրամայական եղանակ

Եզ. Եղի՛ր, մի՛ Ըլլա՛ր, - Թող Ըլլայ, Թող չԸլլայ.

Յոգ. եղի՛ք, մի՛ Ըլլա՛ք, - Թող Ըլլան, Թող չԸլլան:

9ա Անբերեւոյք եղանակ. Ըլլալ:

Դերբայք. Ըլլալու, Ըլլալով, Ըլլալին:

36. Լծորդի բայն ներդործական՝ ՍԻՐԵԼ:

Սահմանականի ներկայ

Եզ. Կու սիրեմ, կու սիրես, կու սիրէ.

Յոգ. կու սիրենք, կու սիրէք, կու սիրեն:

Անկատար

Եզ. Կու սիրէի, կու սիրէիր, կու սիրէր.

Յոգ. կու սիրէանք, կու սիրէիք, կու սիրէին:

Կատարեալ

Եզ. Սիրեցի, սիրեցիր, սիրեց.

Յոգ. սիրեցանք, սիրեցիք, սիրեցին:

Յարակատար

Եզ. Սիրերեմ, սիրերես, սիրերէ.

Յոգ. սիրերենք, սիրերէք, սիրերեն:

Գերակատար

Եզ. Սիրերէի, սիրերէիր, սիրերէր.

Յոգ. սիրերէանք, սիրերէիք, սիրերէին:

Ապառնի

Եզ. Սիրեմ, սիրես, սիրէ.

Յոգ. սիրենք, սիրէք, սիրեն:

Հրամայական եղանակ

Եզ. Սիրէ՛, մի՛ սիրեր, - Թող սիրէ, Թող չսիրէ.

9բ Յոգ. սիրեցէ՛ք, մի՛ սիրէք, - Թող սիրեն, Թող չսիրեն:

Անբերեւոյք եղանակ. Սիրել:

Դերբայք. Սիրելու, սիրելով, սիրելին:

37. Լծորդի բայն կրաւորական՝ ՍԻՐԻԼ:

Սահմանականի ներկայ

Եզ. Կու սիրւիմ, կու սիրւիս, կու սիրւի.

Յոգ. կու սիրւինք, կու սիրւիք, կու սիրւին:

Անկատար

Եզ. Կու սիրւէի, կու սիրւէիր, կու սիրւէր.

Յոգ. կու սիրւէանք, կու սիրւէիք, կու սիրւէին:

Կատարեալ

Եզ. Սիրւեցայ, սիրւեցար, սիրւեցաւ.

Յոգ. սիրւեցանք, սիրւեցաք, սիրւեցան:

Յարակատար

Եզ. Սիրւերեմ, սիրւերես, սիրւերէ.

Յոգ. սիրւերենք, սիրւերէք, սիրւերեն:

Գերալատար

Եզ. Սիրւերէի, սիրւերէի, սիրւերէի.

Յոգ. սիրւերէանք, սիրւերէիք, սիրւերէին:

Ապառնի

Եզ. Սիրւիմ, սիրւիս, սիրւի.

Յոգ. սիրւինք, սիրւիք, սիրւին:

10ա Հրամայական եղանակ

Եզ. Սիրւի՛ր, մի՛ սիրւիր, - թող սիրւի, թող չսիրւի.

Յոգ. սիրւեցէ՛ք, մի՛ սիրւիք, - թող սիրւին, թող չսիրւին:

Անբերոյթ եղանակ. Սիրւիլ:

Դերբայք. Սիրւելու, սիրւելով, սիրւելնին:

Ասորպէս կու լծորդին այս բայերս. Աղատել, աղել, աղճատել, արծել, աւրել, բաշխել, բամբասել, դամել, դիզել, եփել, զատել, ընծայել, թաղել, ժողովել, լսել, խաչել, ծախել, կապել, հալել, ձեւել, ճամփել, մաղել, յայտնել, ներկել, շարել, ոլորել, չափել, պատմել, ջրել, սրբել, վառել, տաշել, ցանել, փորել, քաղել, օծել, եւայլն:

38. Բայց զիտնալ պէտք է՝ զի շատ բայեր կան, որ թէպէտ այս կերպովս կը լծորդին, բայց ներգործական չեն, այլ չէղորդական կասկին. նորա համար՝ կրաւորական լծորդութիւն չեն ունենար, ինչպէս են այս բայերս. կաղօթեմ, աղօթեցի, աղօթէ՛. կու ծառայեմ, ծառայեցի, ծառայէ՛. կու հայցեմ, հայցեցի, հայցէ՛. կու հրամայեմ, հրամայեցի, հրամայէ՛, եւայլն:

39. Դարձեալ զիտնալ պէտք է՝ զի քանի մի բայեր կան այս կերպիս ներքեւ, որ իրենց կատարեալ ժամանակն եւ հրամայականն ուրիշ կերպ կու լինին, ինչպէս են ասոնք. կու բերեմ, կու տանիմ, կու դնեմ, կու խածնեմ, կու թքնեմ, կու դտնեմ, կելլեմ, կիջնեմ, կու մտնեմ:

10բ

Եւ կատարեալն ուրիշ կերպ լինին այս է, որ չի եղերիւր եցի, այլ՝ ի կամ ալ, զոր օրինակ.

բերի, բերիր, բերաւ, բերանք, բերիք, բերին.
տարի, տարիր, տարաւ, տարանք, տարիք, տարին.
դրի, դրիր, դրաւ, դրանք, դրիք, դրին.
խածի, խածիր, խածաւ, խածանք, խածիք, խածին.
թքի, թքիր, թքաւ, թքանք, թքիք, թքին.

դտայ, դտար, դտաւ, դտանք, դտաք, դտան.
ելայ, ելար, ելաւ, ելանք, ելաք, ելան.
իջայ, իջար, իջաւ, իջանք, իջաք, իջան.
մտայ, մտար, մտաւ, մտանք, մտաք, մտան:

Եւ հրամայականն ուրիշ կերպ լինին այս է, որ չի եղերիւր է, այլ՝ իր, զոր օրինակ.

դտի՛ր, մի՛ դտներ, թող դտնէ, թող չի դտնէ.
դտէ՛ք, մի՛ դտնէք, թող դտնեն, թող չի դտնեն.
իջի՛ր, մի՛ իջներ, թող իջնէ, թող չի իջնէ.
իջէ՛ք, մի՛ իջնէք, թող իջնեն, թող չի իջնեն.
մտի՛ր, մի՛ մտներ, թող մտնէ, թող չի մտնէ.
մտէ՛ք, մի՛ մտնէք, թող մտնեն, թող չի մտնեն.

Եւ կամ թէ արմատն բային կու լինի հրամայական, զոր օրինակ.

տա՛ր, մի՛ տանիր, թող տանի, թող չի տանի.
տարէ՛ք, մի՛ տանիք, թող տանին, թող չի տանին.
դի՛ր, մի՛ դներ, թող դնէ, թող չի դնէ.
դրէ՛ք, մի՛ դնէք, թող դնեն, թող չի դնեն.
խա՛ծ, մի՛ խածներ, թող խածնէ, թող չի խածնէ.
խածէ՛ք, մի՛ խածնէք, թող խածնեն, թող չի խածնեն.
11ա թո՛ւք, մի՛ թքներ, թող թքնէ, թող չի թքնէ.
թքէ՛ք, մի՛ թքնէք, թող թքնեն, թող չի թքնեն.
ե՛լ, մի՛ ելիր, թող ելլէ, թող չելլէ.
ելէ՛ք, մի՛ ելլէք, թող ելլեն, թող չելլեն:

40. Բայ ալ կայ, որ իր կատարեալն թէպէտ ի կու եղերի, բայց հրամայականն իր չի եղերիւր, այլ՝ է, ինչպէս այս բայս. կանեմ, կանես, կանէ, որ իր կատարեալն կու լինի՝ արի, արիւր, արաւ, արանք, արիք, արին: Եւ հրամայականն կու լինի. արէ՛, մի՛ աներ, թող անէ, թող չանէ:

41. Դարձեալ զիտնալ պէտք է, զի այն բայերն՝ որ ձայնաւոր դրով կու սկսին, սահմանականի ներկան եւ անկատարն կեն պիտի ունենան իրենց սկիզբն, ինչպէս ասոնք.

կաղաղակեմ, կաղաղակես, կաղաղակէ,
կաղաղակենք, կաղաղակէք, կաղաղակեն.

կաղաղակէի, կաղաղակէի, կաղաղակէր,
կաղաղակէանք, կաղաղակէիք, կաղաղակէին.
կեփեմ, կեփես, կեփէ, կեփենք, կեփէք, կեփեն.
կեփէի, կեփէիր, կեփէր, կեփէանք, կէփէիք, կեփէին, եւն.:

Եւ այն բայերն որ բաղաձայն դրով կու սկսին, կու վանկս
սկիտի ունենան իրենց սկիդքն, ինչպէս ասոնք.

կու թրեմ, կու թրես, կու թրէ,
կու թրենք, կու թրէք, կու թրեն.

կու թրէի, կու թրէիր, կու թրէր,
կու թրէանք, կու թրէիք, կու թրէին.

կու խածնեմ, կու խածնես, կու խածնէ,
կու խածնենք, կու խածնէք, կու խածնեն.

կու խածնէի, կու խածնէիր, կու խածնէր,
կու խածնէանք, կու խածնէիք, կու խածնէին:

11բ

42. Լծորդի ներդործական բայս՝ ԻՄԱՆԱԼ.

Սահմանականի ներկայ

Եզ. կիմանամ, կիմանաս, կիմանայ.

Յոգ. կիմանանք, կիմանաք, կիմանան:

Անկատար

Եզ. կիմանայի, կիմանայիր, կիմանար.

Յոգ. կիմանայանք, կիմանայիք, կիմանային:

Կատարեալ

Եզ. իմացայ, իմացար, իմացաւ.

Յոգ. իմացանք, իմացաք, իմացան:

Յարակատար

Եզ. իմացերեմ, իմացերես, իմացերէ.

Յոգ. իմացերենք, իմացերէք, իմացերեն:

Գերակատար

Եզ. իմացերէի, իմացերէիր, իմացերէր.

Յոգ. իմացերէանք, իմացերէիք, իմացերէին:

Ապառնի

Եզ. իմանամ, իմանաս, իմանայ.

Յոգ. իմանանք, իմանաք, իմանան:

Հրամայական եղանակ

Եզ. իմացի՛ր, մի՛ իմանար, - թող իմանա՛, թող չիմանա.

Յոգ. իմացէ՛ք, մի՛ իմանաք, - թող իմանան, թող չիմանան:

Աներեւոյթ եղանակ. իմանալ:

Դերբայք. իմանալու, իմանալով, իմանալինի:

12ա

43. Լծորդի ասոր կրաւորականն՝ ԻՄԱՑԻԻԼ:

Սահմանականի ներկայ

Եզ. կիմացւիմ, կիմացւիս, կիմացւի.

Յոգ. կիմացւինք, կիմացւիք, կիմացւին:

Անկատար

Եզ. կիմացւէի, կիմացւէիր, կիմացւէր.

Յոգ. կիմացւէանք, կիմացւէիք, կիմացւէին:

Կատարեալ

Եզ. իմացւեցայ, իմացւեցար, իմացւեցաւ.

Յոգ. իմացւեցանք, իմացւեցաք, իմացւեցան:

Յարակատար

Եզ. իմացւերեմ, իմացւերես, իմացւերէ.

Յոգ. իմացւերենք, իմացւերէք, իմացւերեն:

Գերակատար

Եզ. իմացւերէի, իմացւերէիր, իմացւերէր.

Յոգ. իմացւերէանք, իմացւերէիք, իմացւերէին:

Ապառնի

Եզ. իմացւիմ, իմացւիս, իմացւի.

Յոգ. իմացւինք, իմացւիք, իմացւին:

Հրամայական եղանակ

Եզ. իմացւի՛ր, մի՛ իմացւիր, - թող իմացւի, թող չիմացւի.

Յոգ. իմացւեցէ՛ք, մի՛ իմացւեք, - թող իմացւին, թող չիմացւին:

Աներեւոյթ եղանակ. իմացւիլ:

Դերբայք. իմացւելու, իմացւելով, իմացւելինի:

12բ

Ասորպէս կու լուծորդին ասոնք. գիտնալ, գողնալ, հասկա-
նալ, մոռանալ, եւայլն:

- Անկատար
- Եզ. Կապրէի, կապրէի, կապրէր.
- Յոգ. կապրէանք, կապրէիք, կապրէին:
- Կատարեալ
- Եզ. Ապրեցայ, ապրեցար, ապրեցաւ.
- Յոգ. ապրեցանք, ապրեցաք, ապրեցան:
- Յարակատար
- Եզ. Ապրերեմ, ապրերես, ապրերէ.
- Յոգ. ապրերենք, ապրերէք, ապրերեն:
- Գերակատար
- Եզ. Ապրերէի, ապրերէիր, ապրերէր.
- Յոգ. ապրերէանք, ապրերէիք, ապրերէին:
- Ապառնի
- Եզ. Ապրիմ, ապրիս, ապրի.
- Յոգ. ապրինք, ապրիք, ապրին:
- Հրամայական եղանակ
- Եզ. Ապրէ՛, մի՛ ապրիր, թող ապրի, թող չապրի.
- Յոգ. ապրեցէ՛ք, մի՛ ապրիք, թող ապրին, թող չապրին:
- Աներեւոյթ եղանակ. Ապրիլ:
- Դերբայք. Ապրելու, ապրելով, ապրելին:

14բ Այսպէս կու լծորդին շատ բայեր, ինչպէս ասոնք. աշխատիլ, բորտտիլ, գայթակղիլ, դաւանիլ, երկբայիլ, դբաղիլ, ընդունիլ, թմրիլ, ժաժիլ, խոնարհիլ, ծաղկիլ, կամիլ, հաճիլ, ձկտիլ, դալատիլ, ճղճիլ, մգլիլ, յօժարիլ, նայիլ, շուարիլ, ուռեցւորիլ, պաղիլ, սահիլ, Վաստակիլ, տրտմիլ, ցաւիլ, փոշիմանիլ, քրտնիլ, օթեւանիլ:

51. Բայց գիտնալ պէտք է որ քանի մի ձայնակրական բայեր կան, որ իրենց կատարեալն եցայ չի լինիր, այլ՝ այ կու եղերի. եւ հրամայականն կու լինի իր. ինչպէս բուսնիլ բայիս կատարեալն կու լինի բուսայ, բուսար, բուսաւ, բուսամք, բուսաք, բուսան. եւ հրամայականն՝ բուսի՛ր, մի՛ բուսիր, քող բուսի, քող չի բուսի, բուսէք, մի՛ բուսիք, քող բուսիմ, քող չի բուսիմ:

Եւ ասորպէս կու լծորդին ասոնք. կորիլ, անցնիլ, պրծիլ, ընկնիլ, թռչիլ, հագնիլ, հասնիլ, հատնիլ, մեռնիլ, ուսնիլ, սնիլ, փախչիլ, նստիլ:

52. Լծորդի անցողական բայք՝ ՀԱՇՏԵՑՆԵԼ:

Սաեմանակամի ներկայ

- Եզ. Կու հաշտեցնեմ, կու հաշտեցնես, կու հաշտեցնէ.
- Յոգ. կու հաշտեցնենք, կու հաշտեցնէք, կու հաշտեցնեն:

Անկատար

- Եզ. Կու հաշտեցնէի, կու հաշտեցնէիր, կու հաշտեցնէր.
- 15ա Յոգ. կու հաշտեցնէանք, կու հաշտեցնէիք, կու հաշտեցնէին:

Կատարեալ

- Եզ. Հաշտեցուցի, հաշտեցուցիր, հաշտեցուց.
- Յոգ. հաշտեցուցանք, հաշտեցուցիք, հաշտեցուցին:

Յարակատար

- Եզ. Հաշտեցուցերեմ, հաշտեցուցերես, հաշտեցուցերէ.
- Յոգ. հաշտեցուցերենք, հաշտեցուցերէք, հաշտեցուցերեն:

Գերակատար

- Եզ. Հաշտեցուցերէի, հաշտեցուցերէիր, հաշտեցուցերէր.
- Յոգ. հաշտեցուցերէանք, հաշտեցուցերէիք, հաշտեցուցերէին:

Ապառնի

- Եզ. Հաշտեցնեմ, հաշտեցնես, հաշտեցնէ.
- Յոգ. հաշտեցնենք, հաշտեցնէք, հաշտեցնեն:

Հրամայական եղանակ

- Եզ. հաշտեցո՛ւր, մի՛ հաշտեցներ, թող հաշտեցնէ, թող չի հաշտեցնէ.
- Յոգ. հաշտեցուցէ՛ք, մի՛ հաշտեցնէք, թող հաշտեցնեն, թող չի հաշտեցնեն:

Աներեւոյթ եղանակ. Հաշտեցնել:

Դերբայք. Հաշտեցնելու, հաշտեցնելով, հաշտեցնելին:

15բ Ասորպէս կու լծորդին ամէն անցողական բայեր, ինչպէս ասոնք. դողցնել, խմցնել, կենդանացնել, կիշտացնել, կորսնցնել, կսկծեցնել, հանգչեցնել, հաստըցնել, հատցնել, հաւնեցնել, հեծցնել, | հիացնել:

53. Եւ շատ ձայնակրական բայեր կան, որ երբ իրենց մէջ մըտնու այս ձայնիկա՝ ցն, անցողական կու լինին, ինչպէս ասոնք. խոնարհիլ – խոնարհեցնել, խոստովանիլ – խոստովանեցնել, ծաղկիլ –

ծաղկեցնել, ծիծաղիլ — ծիծաղցնել, հակիլ — հակեցնել, հաճիլ — հաճեցնել, բանիլ — բանեցնել:

54. Եւ այս տեղս զիտնալ արեւք է, զի քանի մի բայեր կան, որ իրենց կատարեալ ժամանակին մէջ ձայներնին կու փոխի, ինչպէս ասոնք.

1.- Ո Ի Տ Ե Լ

Սահմանականի ներկայ

Եզ. Կուտեմ, կուտես, կուտէ.

Յոգ. կուտենք, կուտէք, կուտեն:

Կատարեալ ժամանակն կու լինի

Եզ. Կերայ, կերար, կերաւ.

Յոգ. կերանք, կերաք, կերան:

Յարակատար

Եզ. Կերերեմ, կերերես, կերերէ.

Յոգ. կերերենք, կերերէք, կերերեն:

Գերակատար

Եզ. Կերերէի, կերերէիր, կերերէր.

Յոգ. կերերէանք, կերերէիք, կերերէին:

Ապառնի կու լինի

Եզ. Ուտեմ, ուտես, ուտէ.

Յոգ. ուտենք, ուտէք, ուտեն:

Հրամայական եղանակ

Եզ. Կե՛ր, մի՛ ուտեր, — թող ուտէ, թող չուտէ:

Յոգ. Կերէ՛ք, մի՛ ուտէք, — թող ուտեն, թող չուտեն:

Աներեւոյթ եղանակ. Ուտել:

Դերբայք. Ուտելու, ուտելով, ուտելինի:

2.- Գ Ա Լ

16ա

Սահմանականի ներկայ

Եզ. Կու գամ, կու գաս, կու գայ.

Յոգ. կու գանք, կու գաք, կու գան:

Անկատար

Եզ. Կու գայի, կու գայիր, կու գար.

Յոգ. կու գայանք, կու գայիք, կու գային:

Կատարեալ

Եզ. Եկի, եկիր, եկաւ.

Յոգ. եկանք, եկիք, եկին:

Յարակատար

Եզ. Եկերեմ, եկերես, եկերէ.

Յոգ. եկերենք, եկերէք, եկերեն:

Ապառնի

Եզ. Գամ, գաս, գայ.

Յոգ. գանք, գաք, գան:

Հրամայական եղանակ

Եզ. Եկո՛ւ, մի՛ գար, թող գայ, թող չգայ:

Յոգ. եկէ՛ք, մի՛ գաք, թող գան, թող չգան:

Աներեւոյթ եղանակ. Գալ:

Դերբայք. Գալու, գալով, գալինի:

3.- Ե Ր Թ Ա Լ

Սահմանականի ներկայ

Եզ. Կերթամ, կերթաս, կերթայ.

Յոգ. կերթանք, կերթաք, կերթան:

Անկատար

Եզ. Կերթայի, կերթայիր, կերթար.

16բ Յոգ. կերթայանք, կերթայիք, կերթային:

Կատարեալ

Եզ. Գնացի, գնացիր, գնաց.

Յոգ. գնացանք, գնացիք, գնացին:

Յարակատար

Եզ. Գնացերեմ, գնացերես, գնացերէ.

Յոգ. գնացերենք, գնացերէք, գնացերեն:

Ապառնի

Եզ. Երթամ, երթաս, երթայ.

Յոգ. երթանք, երթաք, երթան:

Հրամայական եղանակ

Եզ. Գնա՛, մի՛ երթար, – թող երթա՛, թող չերթա.

Յոգ. զնացէ՛ք, մի՛ երթաք, – թող երթան, թող չերթան:

Անբերեոյթ եղանակ. Երթալ:

Դերբայք. Երթալու, երթալով, երթալինի:

55. Դարձեալ դիտնալ պէտք է, որ այս մեր աշխարհաբար լեզուի մէջ, այս էական բացասական բայս՝ չեմ – չես – չի – չեմք – չեք – չեն, չէի – չէիր – չէր – չեանք – չէիք – չէին, ինչ բայի հետ որ միաւորի, թէ որ այն բայի վերջի մեմն ի ըէ փոխես, իւր դիմովն եւ թուովն կու լծորդէ, զոր օրինակ բայս «Սիրեմ», յորժամ մեմն ի ըէ փոխեմ, կու լինի սիրեր, եւ երբ չեմ բայն միաւորեմ սորա հետ, կու լծորդի այսպէս.

17ա Զեմ սիրեր, չես սիրեր, չի սիրեր.
չենք սիրեր, չէք սիրեր, չեն սիրեր:

Զէի սիրեր, չէիր սիրեր, չէր սիրեր.
չէանք սիրեր, չէիք սիրեր, չէին սիրեր:

Ասորպէս կու լինին ամէն բայեր, որ եմ կու վերջանան:

56. Եւ այն բայերն՝ որ ամ կու վերջանան, այսպէս կու լծորդին.

Զեմ իմանար, չես իմանար, չի իմանար.
չենք իմանար, չէք իմանար, չեն իմանար:

Զէի իմանար, չէիր իմանար, չէր իմանար.
չէանք իմանար, չէիք իմանար, չէին իմանար:

Ասորպէս կու լինին ամէն բայեր, որ ամ կու վերջանան:

57. Այն բայերն՝ որ ում կեղերին, այսպէս կու լծորդին.

Զեմ թողուր, չես թողուր, չի թողուր.
չենք թողուր, չէք թողուր, չեն թողուր:

Զէի թողուր, չէիր թողուր, չէր թողուր.
չէանք թողուր, չէիք թողուր, չէին թողուր:

Ասորպէս կու լինին ամէն բայեր, որ ում կու վերջանան:

58. Եւ այն բայերն՝ որ իմ կեղերին, այսպէս կու լծորդին.

17բ Զեմ նստիր, չես նստիր, չի նստիր.
չենք նստիր, չէք նստիր, չեն նստիր:

Զէի նստիր, չէիր նստիր, չէր նստիր.
չէանք նստիր, չէիք նստիր, չէին նստիր:

Կամ չեմ սիրւիր, չես սիրւիր, չի սիրւիր, եւայլն:

59. Դարձեալ, քանի մի բայեր կան, որ միայն երրորդ դէմն ունին, եւ նորա համար դիմազուրկ կասվին, եւ յողնակի չեն լինիր, ինչպէս ահա օրինակն կու դնենք.

ա) Օրինակ դիմազուրկ բային, որ իր աներեւոյթն ել կու վերջանայ.

Սահմանական եղանակ

Ներկայ. Կանճրեւէ:

Անկատար. Կանճրեւէր:

Կատարեալ. Անճրեւեց:

Յարակատար. Անճրեւերէ:

Գերակատար. Անճրեւերէր:

Ապառնի. Անճրեւէ:

Հրամայական եղանակ. Թող անճրեւէ, թող չանճրեւէ:

Անբերեոյթ. Անճրեւել:

Դերբայք. Անճրեւելու, անճրեւելով, անճրեւելինի:

Ասորպէս կու լծորդին ասոնք. մթնել, ածել, բքել, ըղակել, կաթել, սղել, վայել, ջերել, ցողել, փայլատակել, օգտել, եւ այլ ուրիշ նմանք ասոնց:

18ա բ) Օրինակ դիմազուրկ բային, որ իր աներեւոյթն ալ կու վերջանայ.

Սահմանական եղանակ

Ներկայ. Կու գոռայ:

Անկատար. Կու գոռար:

Կատարեալ. Գոռաց:

Յարակատար. Գոռացերէ:

Գերակատար. Գոռացերէր:

Ապառնի. Գոռայ:

Հրամայական եղանակ. Թող դուռա՛, թող չի դուռա՛:

Անեքեւոյք. Գոռալ:

Դեքբայք. Գոռալու, դոռալով, դոռալնինի:

Ասորպէս կու լծորդին ասոնք. դուռալ, ծփալ, կածկլտալ, որոտալ, ցոլալ:

Բայց մէկ քանիին կատարեալն ուրիշ կերպ կու լինին, ինչպէս ասոնց. մթըննալ, լուսնալ, որ կու լինին մթընցալ, լուսցալ:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՍՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ, ՈՐ ԿՈՒ ՀՈԼՈՎԻ ԱՆՃՆԻՊԵՍ,

ԵՒ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՆԻ ԲԱՅԻՊԵՍ:

60. Ընդունելութիւնն չորս կերպ կու վերջաւորի, այսինքն՝
օղ, ած, ու, իք, ինչպէս ասոնք.

ուտօղ — ուտօղ

կերած — կերած

ուտելու

ուտելիք:

18բ

61. Ասոնք որ օղ կու վերջաւորին, ներկայ ժամանակի | ներքեւ կու նշանակեն, ինչպէս՝ սիրօղ, տեսնօղ, լսօղ, վառօղ, ուտօղ, խմօղ, եւայլն: Եւ ասոնք ամէնն կու հոլովին այսպէս. Տեսնօղ, տեսնողի, տեսնողին, տեսնողն, ո՛վ տեսնող. Տեսնողներ — տեսնողներու, եւայլն:

Եւ դիտնալ պէտք է՝ որ ասոնց դործիական հոլով չի լինիր, այլ՝ կոչական, ինչպէս օրինակն կերեւի:

62. Ասոնք որ ած կու վերջաւորին, անցեալ ժամանակի ներքեւ կու նշանակեն, ինչպէս՝ սիրած, տեսած, լսած, վառած, կերած, խմած, եւայլն: Եւ ասոնք ամէնն կու հոլովին այսպէս. Տեսած, տեսածի, տեսածին, տեսածն, տեսածով. Տեսածներ, տեսածներու, եւայլն:

63. Ասոնք որ ու կու վերջանան, ասպառնի ժամանակի ներքեւ կու նշանակեն, ինչպէս՝ սիրելու, տեսելու, լսելու, վառելու, ուտելու, խմելու, եւայլն: Եւ ասոնք չեն հոլովիր իրենք իրենց:

64. Եւ այս երեք կերպ ընդունելութիւնս՝ ներդործական են, եւ իրենց կրաւորականն կու լինի՝ սիրւօղ, սիրւած, սիրելիք: Եւ սիրւօղ, սիրւածն չի հոլովիր, զի կրաւորական է, եւ ասպառնի ժամանակի ներքեւ նշանակօղ:

19ա

ԳԼՈՒԽ Զ.

ՎԱՍՆ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ, ՈՐ ԶԻ ՀՈԼՈՎԻ ԵՒ ԶԻ ԼԾՈՐԴԻՐ:

65. Նախադրութիւնք կասելն այս բառերս. դուս, ներքեւ, վրայ, մէջը, առջեւ, էտեւ, առջեւէն, ետեւէն, համար, տեղն, հետ, մօտն, հեռու, առանց, դէմ, դիմացն, դէպ, պէս, ՚ի զատ, քան, դիւհ, հինչօր, ըստ:

Եւ ասոնք անընդուն հետ այսպէս կու միաւորին, ինչպէս. Տնէն դուրս, բարձին ներքեւ, գլխուն վրայ, անտկին մէջը, աչիւն առջեւ, գլխուն էտեւ, քիւն առջեւէն, անկճին ետեւէն, խենթութեան համար, խելօքութեան տեղն, խենթութեան հետ, քաղքին մօտն, պարսպէն հեռու, առանց ծեծի, մեծերուն դէմ, տանն դիմաց, դէպ ՚ի շուկան, առջուպէս, տղոցմէն ՚ի զատ, քան զան, անոնց դիւհն, հինչօր իրիկուն, ըստ քու խօսիցն՝ աշխատանք պէտք է:

ԳԼՈՒԽ Է.

ՎԱՍՆ ՄԱԿԲԱՅԻ, ՈՐ ԶԻ ՀՈԼՈՎԻ ԵՒ ԶԻ ԼԾՈՐԴԻՐ:

66. Մակրայներուն մէկ քանին կասելն տեղ ցուցանօղ, ինչպէս ասոնք. ուր, աստեղս, անտեղը, տեղ տեղ, ամէն տեղ, ուրիշ տեղ, վեր, վար, ներս, դուրս, ներսէն, դրսէն, ասկից, ատկից, անկից:

19բ

Եւ ասոնք բայերուն հետ այսպէս կու միաւորին. Ուր դնաց, աստեղս եկաւ, անտեղն մտաւ, տեղ տեղ աւերեք, ամէն տեղ փրկեք, ուրիշ տեղ դտաւ, վեր դնաց, վար եկաւ, ներս մտաւ, դուրս ելաւ, ներսէն հայեցաւ, դրսէն ճամփեց, ասկից առաւ, ատկից կերաւ, անկից գողցաւ:

67. Մէկ քանին ժամանակ ցուցանօղ կասելն, ինչպէս ասոնք. ե՛րբ, ինչ ատեն, հիմի, անատենն, ասօր, վաղն, էրէկ, հերու,

միշտ, երբեմն, անկէտն, դեռ, երբ որ, քանի որ, վաղուց, չատոնց :

Եւ ասոնք բայերուն հետ այսպէս կու միաւորին. Ե՞րբ կու խելօքնաս, ի՞նչ ատեն կուգաս, հիմի իմացար, անատենն խօսեցայ, ասօր լսեցիր, վաղն կու հասկանաս, էրէկ շուրջ եկար, հէրու պառկեցար, միշտ կու հիւընտնաս, երբեմն կաղէկնաս, անկէտն իմացայ, դեռ չէ բացւեր, երբ որ հասնի, քանի որ լինի, վաղուց եկերէ, շատոնց նստերէ :

68. Մէկ քանին որպիսութեան ցուցանօղ կասկին, ինչպէս այս ձայնկներս. երէն, ցի, ալի, զոր օրինակ՝ հայերէն, բռնցի, յանկարծակի :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. հայերէն խօսեցաւ, բռնցի զարկաւ, յանկարծակի մեռաւ :

69. Մէկ քանին որքանութեան ցոյց տուող են, ինչպէս ասոնք. որչափ, այսչափ, այնչափ, այսքան, այնքան, մէկ հեղ, շատ հեղ, ամէն հեղ, քիչ, շատ, քիչուկ, շատկեկ, քիչ քիչ :

20ա Եւ բայերուն հետ այսպէս կու միաւորին. Ո՞րչափ մեծցաւ, այսչափ խելօքցաւ, այնչափ զիրցաւ, | այսքան կերաւ, այնքան խմեց, մէկ հեղ տեսայ, շատ հեղ խօսեցայ, ամէն հեղ զժարցայ, քիչ հեղ ուրախացայ, քիչ կուտէ, շատ կու խմէ, քիչուկ կառնու, շատկեկ կուտայ, քիչ քիչ կու սօրլի :

70. Մէկ քանին հարցընելն ցոյց տուող են, ինչպէս ասոնք. ի՞նչ, ինչո՞ւ, ի՞նչպէս, ինչո՞ւ համար, մի՞թէ :

Եւ բայերուն հետ այսպէս կու միաւորին. Ի՞նչ կուգես, ինչո՞ւ եկար, ի՞նչպէս կաւրես, ինչո՞ւ համար կու լաս, մի՞թէ չկերար :

71. Մէկ քանին հա՞ ասելն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. հա՛, ատանկ, իրաւ, ճշմարիտ, ստուղ :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Հա՛ այդպէս է, ատանկ է, իրաւ է, ճշմարիտ է, ստուղ է :

72. Մէկ քանին գատ գատ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. մօտ մօտ, դատ դատ, մէկ մէկ, երկերկու, հեռու հեռու :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Մօտ մօտ շարէ, դատ դատ դիւր, մէկ մէկ վերուր, երկերկուք ա՛ռ, հեռու հեռու կանդնեցուր :

73. Մէկ քանին ծածուկ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. ծածկաբար, գաղտուկ, կամկրուկ, գողիպէս :

Եւ բայերուն հետ այսպէս կու միաւորին. Ծածկաբար առաւ, գաղտուկ կերաւ, կամկրուկ ելաւ, գողիպէս գնաց :

74. Մէկ քանին յայտնի լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. յայտնի, յայտնապէս :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Յայտնի եղաւ, յայտնապէս առաւ :

20բ

75. Մէկ քանին շուտ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. շուտ, շուտ շուտ, կանուխ :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. շուտ եկօ՛, շուտ շուտ քալէ, կանուխ գնա՛ :

76. Մէկ քանին կարգն ցոյց տուող են, ինչպէս ասոնք. առաջ, յետոյ, ապա, ասկիցետեւ, տեղն ՚ի տեղը, պինտ յետքը :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Առաջ ուսիր, յետոյ խօսիր, ապա ասօրվեցուր, ասկից յետեւ կարդա՛, տեղն ՚ի տեղը ցոյց տուր, պինտ յետքը հանդէ՛ :

77. Մէկ քանին միատեղ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. մէկ տեղ, մէքէտէ, բոլորն, ամենեւին, բնաւ :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Մէկ տեղ կերան, մէքէտէ վերցուցին, բոլորն աւրեցաւ, ամենեւին չկերան, բնաւ հատաւ :

78. Մէկ քանին երկրայիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. միթէ, չլինի թէ, թերեւս :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. մի՞թէ եկաւ, չլինի թէ մեռաւ, թերեւս ապրի :

79. Մէկ քանին կրկնիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. կըրկին, վերստին, դարձեալ :

Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Կրկին խօսեցաւ, վերստին հնազանդեցաւ, դարձեալ հանդէսեցաւ :

80. Մէկ քանին սաստիկ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. խիստ, սաստիկ, յոյժ, յորդ :

Եւ բային հետ այսպէս կու միաւորին. Խիստ կու ծեծէ, սաստիկ կու բարկանայ, յոյժ յիմարեցաւ, յորդ ծիծաղեցաւ :

- 21ա 81. Մէկ քանին՝ մէկ բանին առաւել քան գուրիշ բանն ուզելին ցոյց կու տան, ինչպէս ասոնք. առաւել, էւել, մանաւանդ:
- Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Առաւել կերաւ՝ քան թէ լիմեց, էւել կուզէր զինին՝ քան թէ ջուրն, մանաւանդ մեր հետ եղաւ՝ քան ձեր հետ:
82. Մէկ քանին այլ չէ ասելն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. չէ, չէ չէ, բնաւ չէ:
- Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Չէ եկեր, բնաւ չէ կերեր:
83. Մէկ քանին բանին ներկայ լինիլն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. ահա, ահա ահա:
- Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Ահա եկաւ, ահա ահա կերելի:
84. Մէկ քանին՝ բանի մի արգելելն ցոյց կու տան, ինչպէս ասոնք. մի՛, մի՛ մի՛:
- Եւ բայի հետ այսպէս կու միաւորին. Մի՛ ուտեր, մի՛ մի՛ առներ:

ԳԼՈՒԽ Ը.

ՎԱՍՆ ՇԱՂԿԱՊԻ, ՈՐ ԶԻ ՀՈԼՈՎԻՐ ԵՒ ԶԻ ԼԾՈՐԴԻՐ:

85. Շաղկապ կասին այս բառերս. եւ, ու, եւ եւս, նաեւ, կամ, կամ թէ, այլ, բայց, իբր թէ, ուրեմն, թէ, եթէ, ապա թէ, այլ թէ, թէ չէ, վասն այսորիկ, անոր համար, զի, քանզի, թէ՛:

86. Ահա քսան շաղկապ են, եւ ամէն մէկին համար մէկ մէկ տուն խօսք կու շինենք, եւ անով կու երեւի թէ ինչպէս կու մըտնեն խօսքի եւ զրուցի մէջ:

21բ

Ես քեզի եւ քու եղբորն շատ խրատներ տուի:

Կիրակոսն ու իր որդին լաւ քրիստոնեայ են:

Եւ եւս քու հայրն լաւ ջերմեռանդ է:

Նաեւ ձեր քաղաքի մարդիքն լաւ բարեպաշտ են:

Ես ձեզի լաւ խրատներ տուի. կամ կու պահէք, կամ չէք պահեր:

Ձեզ կու խօսիմ, կամ թէ կու գրեմ, որ լաւ հասկանաք:

Այլ գրելս առաւել լաւ է՝ քան խօսիլս:

Բայց դուք այլ պիտի ջանաք լաւ կարգալ:

Իբր թէ լաւ մտքերնիդ պահէք զգրածներս:

Ուրեմն հիմակուց ի վեր պիտի չասէք թէ սօրլեցնող չունինք:

Թէ տեղիք ունիք նէ, կու սօրլիք:

Եթէ կարողութիւն չունիք նէ, ես ի՞նչ ընեմ:

Ապա թէ ունիք կարողութիւն, եւ չէք կամիր, մեղադրու-
թիւնն ձեր է:

Այլ թէ ունիք կարողութիւն, եւ կու կամիք, ՚ի հարկ է՝ կու սօրլիք:

Ես ժամանակ չունէի, թէ չէ՝ շատոնց գրած էի զայս ձեզի:

Վասն այսորիկ պէտք է որ չմեղադրէք մեզի:

Ես շատ դժուարութիւններ ունէի, անոր համար ժամանակս քիչ էր:

Քիչ դժուարութիւն կու քաջէք, զի աշխարհաբար գրեր եմ:

Գրաբառ լեզուն դժուար է, քանզի շատ կանոններ ունի:

Թէ՛ աշխարհաբար խօսիս, թէ՛ գրաբառ, միշտ ՚ի փառս Աստուծոյ խօսիլ ջանա՛, եւ այն է ամենէն լաւն:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԶՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ
ԵՒ ԶՇԱՐԱՅԱՐՈՒԹԵՆԷ ՆՈՑԻՆ

22ա

ԳԼՈՒԽ Ա.

ՎԱՍՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ

87. Քերականութիւնն մէկ արուեստ մի է, որ անով շիտակ խօսիլ եւ շիտակ գրել կու սօրլուի: Եւ իր գլխաւոր մասունքներն չորս են. այսինքն՝ գիրն, վանկն, բառն եւ բանն: Եւ մէկ մարդ մի երբ զասոնք լաւ սօրլի, եւ ասոնց ամէն որպիսութիւնն իմա-
նայ եւ հասկընայ նէ, քերականութեան արուեստն սօրլած կու լինի: Նորա համար պէտք է որ ասոնց վրայ լինի մեր բանն:

88. Դարձեալ՝ քերականութեան արուեստին գործքն այս է, որ մարդկային խօսքն եւ բանն կուղղէ եւ կու շիտկէ: Եւ մարդ-

24ա նաև է գրադար մի. բայց բեմբուն է աննշան | ձայն, քանդի բան
մի չի նշանակեր:

96. Դարձեալ՝ կան վանկեր, որ իր մի կու նշանակեն, ինչպէս
ասոնք. բիբ, բուն, բօք. եւ կան վանկեր՝ որ իր մի չեն նշանա-
կեր, ինչպէս ասոնք. բալ, բեբ, բըբ:

97. Ասոր համար պէտք է լաւ գիտնալ որ ձայնն՝ թէ իր մի
նշանակէ եւ թէ չնշանակէ, երբ որ մէկ շնչով կելանէ մեր բեր-
նէն, վանկ է. երբ երկու կամ երեք շնչով կելանէ, վանկ չէ. այլ՝
կամ բառ է, թէ իր մի կու նշանակէ. եւ կամ աննշան ձայն մի է,
երբ իր մի չի նշանակեր:

98. Եւ այս տեղս գիտնալ պէտք է, որ այս չորս վանկս ալ,
նյ, իւ, եա, այնքան չեն բանիր աշխարհաբար լեզուին մէջ, ինչ-
պէս որ միշտ կու բանին գրաբառ լեզուին մէջ: Քանդի գրաբառ
լեզուին մէջ այն բառերն որ դայս վանկերս ունին, երբ աշխար-
հաբար լեզուով ասուին, այն վանկերուն ձայներն կու փոխուին, ինչ-
պէս ահա օրինակն կու դնենք եւ կերեւի.

1) ալ վանկն այսպէս կու փոխուի.

այլ - ալ, այն - ան, լայն - լան, ձայն - ձան, սայլ - սալ, գայլ -
գալ, ֆայլ - ֆալ, միայն - միան:

Ահա այս բառերուս գրաբառն յի ունի, եւ աշխարհաբարն չու-
նի. եւ նորա համար ձայներն կու փոխուին:

2) նյ վանկն այսպէս կու փոխուի.

գոյն - գուն, լոյս - լուս, բոյս - բուս, ֆոյր - ֆուր:

Ահա այս բառերուս գրաբառն որ յի ունի, աշխարհաբարն
յիին տեղն՝ հիուն կու դնէ. եւ անով ձայներն կու փոխուին:

3) իւ վանկն այսպէս կու փոխուի.

24բ ձիւն - ձուն, սիւն - սուն, հիւր - հուր, իւր - իր, սրբութիւն -
սրբութին:

Ահա այս բառերուս գրաբառն որ իւ վանկ ունի, աշխարհա-
բարն ինիին տեղն՝ ո կու դնէ, կամ հիուն դերն կու վերցնէ. եւ
ասով ձայներն կու փոխուին:

4) եա վանկն այսպէս կու փոխուի.

սիրեաց - սիրեց, ֆրիստոնայ - ֆրիստոնայ, սրբութեան - սրբու-
թան, իւրեանց - իրեանց:

Ահա այս բառերուս գրաբառն որ եա վանկ ունի, աշխարհա-
բարն կամ եչն կու վերցնէ, կամ ալբն. եւ անով ձայներն կու
փոխուին:

99. Դարձեալ պէտք է գիտնալ որ երբեմն երբ չի լինիր որ
այն ասած գրերն՝ այս մեր ասածին պէս փոխէ կամ վերցնէ, ու-
րիշ կերպ կու փոխէ. ինչպէս այս բառս՝ գրաբառ ասեմք այգի,
աշխարհաբար չի լինիր յին վերցնել միայն, եւ ասել ագի: Նորա
համար այրն ալ կու փոխէ, եւ կասէ Էգի:

100. Դարձեալ գիտնալու է որ աշխարհաբար լեզուին մէջ այս
վանկերս եմֆ, իմֆ, չեն այնքան բանիր. նորա համար ասոնց մեն
գերն նու կու փոխուի. եւ եմֆ ասելուն տեղն՝ եմֆ կասուի, եւ լի-
նիմֆ ասելուն տեղն՝ լինիմֆ կասուի, ինչպէս ասոնք. սիրեմֆ -
սիրեմֆ, նստիմֆ - նստիմֆ, լսեմֆ - լսեմֆ, կանգնիմֆ - կանգնիմֆ,
եւ այլն:

25ա 101. Դարձեալ գիտնալ պէտք է որ այս վանկս լը, որ գրա-
բառ | լեզուին մէջ չի բանիր, աշխարհաբար լեզուին մէջ շատ կու
բանի, ինչպէս ասոնք. շընւլի, գըւլի, սիրւլի. թէպէտ չինւի,
զըւի, սիրւի ալ կու լինին:

Նաեւ էւ վանկս, որ գրաբառ լեզուին մէջ չի բանիր, աշխար-
հաբար լեզուին մէջ կու բանի, ինչպէս ասոնք. էւել, գէւ, խէւ,
եւայլն:

102. Դարձեալ գիտնալ պէտք է որ քանի մի վանկեր, ինչպէս
ասոնք. այս, այն, քեան, այլ, լաւ է որ շատ տեղ յով ասին եւ
զրին աշխարհաբար լեզուին մէջ ալ, քանդի տեղ տեղ շատ կոպիտ
հնչում է ասելն աս, ան, քան, ալ. նորա համար՝ շատ տեղ լաւ
է ասել եւ գրել այս, միայն, սրբութեան, այլ, քան գրել աս,
միան, սրբութան, ալ:

Եւ վանկս քան յամէն տեղ կոպիտ է դնելն կամ ասելն: Բայց
վանկս ան, աստեղս կոպիտ է, երբ ասենք, միան, անպէս. եւ ու-
րիշ տեղ լաւ է, ինչպէս այս տեղս. անոնք, անտեղն:

Եւ վանկս աս տեղ տեղ կոպիտ է, ինչպէս ասելն ասպէս. եւ
տեղ տեղ լաւ է, ինչպէս ասելն՝ ասոնք աս տեղս:

103. Բայց վանկս ալ երբ կու նշանակէ դայս բառս՝ եւս, լաւ
է. բայց երբ ընդգրկմացօղ շաղկապ է, պէտք է գրել եւ ասել ալ,
եւ ոչ՝ ալ, ինչպէս այս խօսքիս մէջ կերեւի.

Ես եկայ, ան ալ պիտի գայ: Ահա այս տեղս ալն լաւ է: Բայց
երբ ասենք. Ես չկերայ, ալ՝ նա. այս տեղս լաւ չէ ալն. ալ պէտք
է գրել եւ ասել այսպէս. Ես չկերայ, ալ՝ նա:

25բ Դարձեալ վանկս, ալ, երբ | ուրիշ գրի հետ է, ան տեղն լաւ է, ինչպէս ասոնք. սալ, գալ, եւայլն:

ԳԼՈՒԽ Դ.

ՎԱՍՆ ԲԱՌԻ, ԹԵ ԻՆՁ Է ԵՒ ՔԱՆԻ՝ ԿԵՐՊ:

104. Բառն է ձայն, որ իր մի կու նշանակէ: Նորա համար այն ձայներն՝ որ իր մի չեն նշանակեր, բառ չեն ասել: Եւ այն ձայներն՝ որ թէ մէկ վանկով լինին, եւ թէ շատ վանկով, երբ որ իր մի կու նշանակեն, բառ վասուին, ինչպէս ասոնք. հաց, ջուր, մարդ, կենդանի, հարուստ, աղքատ, եւայլն:

105. Եւ այս տեղս գիտնալ պէտք է, որ մեր աշխարհաբար լեզուին միջէն շատ բառեր պակասերեն, եւ անոնց տեղն տաճկէ՝ վար բառեր են մտեր. նորա համար աս տեղս պակասածներուն մէկ քանին կու գնենք, եւ տաճկերէնն՝ որ անոնց տեղն մտերէ՝ գիւմացն կու գրեմք, որ յայտնի լինի:

քանդի	— գէրէ
ոմանք	— պաղի
կերպ կերպ	— թուրլի թուրլի
գիւրլին	— դօլայ
նաեւ	— պիլէ
երբեմն	— կեահիճէ
միշտ	— տայիմայ
անբաղդ	— ուղուրսուզ
ուրեմն	— տէնտի
մինչ	— չիուքի
սակայն	— լաքին
բնաւ	— հէչ
բայց	— ըմմայ
կամ	— ես
պատկան	— մուրալիք
թերեւս	— պէլքի

26ա

106. Շատ բառեր ալ կան մեր աշխարհաբար լեզուին մէջ, որ գրաբարին մէջ չեն բանիր, եւ գրաբար լեզուն ուրիշ բառ ունի անոնց տեղն, ինչպէս ասոնք.

Աշխարհաբար

Գրաբար

Ձեռք կու տայ	ծառայէ կամ յարմար է
ընտո՞ր անեմ	ո՞րպէս արարից
կու բանի	աշխատի կամ կիր առնանի
ի՞նչպէս	ո՞րպէս
կուգեմ	կամիմ կամ խնդրեմ
դար	փորձութիւն
մէկ	մի
ապսպրել	պատուիրել
յապով	ապաւինութեամբ կամ յուսով
անօթի	քաղցած
փնտռել	որոնել
մշտել	խթել
հօգնիլ	խոնջիլ

26բ

107. Շատ բառեր ալ կան այս աշխարհաբար լեզուին մէջ, որ թէպէտ գրաբար լեզուի բառեր են, բայց կամ գրեր պակասերեն լեզունց միջէն, կամ գրեր փոխերեն, ինչպէս ասոնք.

Աշխարհաբար	Գրաբար
Անել	Առնել
աղչել	աղաչել
պաղտել	պաղատիլ
առնել	առնուլ
ծարւիլ	ծարաւիլ
լնել	լնուլ
ճամբայ	ճանապարհ
սօրվիլ	սովորիլ
մօռնալ	մոռանալ
բաժնել	բաժանել
ժողովել	ժողովել
ճանչնալ	ճանաչել
ղրկել	ուղարկել
օրինկել	օրինակել
գողնալ	գողանալ
հալւոր	ալեւոր

27ա

Եւ մեծ լատինն աշխարհաբար լեզուին բառերուն այս կերպով ելերեն գրաբար լեզուի բառերուն:

108. Շատ բառեր ալ կան, որ թէպէտ ամենեւին մէկ են զբա-
բառ լեզուի բառերուն հետ, ինչպէս ասոնք. հաց, ջուր, հող,
թշնամի, սիրել, ատել, գնել, տալ, եւայլն, բայց իրենց հոլովիլն
եւ լծորդիլն ուրիշ կերպ կու լինի աշխարհաբար լեզուով. եւ այս-
պէս զբաբառ լեզուի բառերուն կու զատուին, ինչպէս որ առաջին
զրդին մէջ յայտնի կերեւին:

109. Եւ վասն բաժանման բառերուն՝ զիտնալ պէտք է, որ բա-
ռերն եօթն ցեղ են:

Առաջինն այնպէս նշանակող ձայն մի է, որ իրին ինչ լինիլն
եւ որպիսի լինիլն ցոյց կու տայ. եւ այսպիսի բառերս անուն
կասւին, ինչպէս են ասոնք. մարդ, հրեշտակ, երկինք, երկիր,
ծով, ցամաք, կարմիր, ճերմակ, մեծ, սղախիկ, եւայլն:

27բ Երկրորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ իրին դէմքն
ցոյց կու տայ. եւ այսպիսի բառերս դերանուն կասւին, ինչպէս
ասոնք. ես, դու, նա, աս, ան, ատ, իմ, քո, մեր, ձեր, մերոնք,
ձերոնք, եւայլն:

Երրորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ իրին դործքն
եւ արարքն ցոյց կու տայ, եւ կամ իրին հանդիպածն. եւ այս-
պիսի բառերս բայ կասւին, ինչպէս ասոնք. սիրել, ատել, տես-
նել, հիւանդանալ, նստիլ, կանգնիլ, սիրելի, տեսնելի, եւայլն:

Չորրորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ մէկին ինչ-
պէս լինիլն՝ իւր արած դործքէն ցոյց կու տայ. եւ այսպիսի բա-
ռերս ընդունելութիւն կասւին, ինչպէս ասոնք. ուտող, խմող, նըս-
տող, կանգնած, տեսնելու, խօսելիք, եւայլն:

Հինգերորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ իրին ինչ
լինիլն ցոյց չի տար, այլ իրին ուր տեղ լինիլն եւ որ կողմն կե-
նալն ցոյց կու տայ. եւ այսպիսի բառերս նախադրութիւն կասւին,
ինչպէս ասոնք. ներս, դուրս, վար, վեր, եւայլն:

Վեցերորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ իրին ա-
բած դործքին ինչպէս լինիլն կամ երբ լինիլն ցոյց կու տայ. եւ
այսպիսի բառերս մակբայ կասւին, ինչպէս ասոնք. շուտ, կամայ,
հիմակ, յետոյ, յանկարծակի, շատոնց, եւայլն:

Եօթներորդ ցեղն այնպէս նշանակող ձայն մի է, որ թէպէտ
կերեւի թէ իր մի չի նշանակել, բայց զնշանակող խօսքերն կերպ
կերպ մէկ մէկի հետ կու միաւորէ եւ վու կասի, եւ ինչ կերպով
կապիլն ցոյց կու տայ. եւ այսպիսի բառերս շաղկապ կասւին,
ինչպէս ասոնք. զի, քանզի, ուրեմն, եթէ, եւայլն:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՍՆ ԲԱՆԻՆ, ԹԷ ԻՆՉ Է:

110. Բանն, այսինքն՝ խօսքն եւ զրոյցն է վարդով շարածք
կամ հուսածք բառերուն: Քանզի երբ որ մեր ասելիքին պէտք
եղած բառերն կարգով մէկ մէկի հետ շարենքնէ, բան կու լինի,
եւ մեր մտաց միջի ասելիքն՝ մտիկ անողին կիմացնէ եւ կու յայտ-
նէ, ինչպէս ես որ կու կամիմ ասել զայս բանս. Մարդն անոր
համար ստեղծեքէ, որ Աստուծոյ պատուիրանն պահէ, եւ անով
արքայութիւն երթայ: Այս բանիս պէտք եղած բառերն կարգով
շարեցի. նորա համար իմ մտաց միջի ասելիքն յայտնեց: Բայց
թէ առանց կարգի շարերէի, չէր յայտնէր, քանզի բան չէր լինիր,
ինչպէս ահա, օրինակի համար, նոյն բանին բառերն առանց կար-
գի կու գնեմ. Համար մարդ անոր Աստուծոյ որ ստեղծեքէ, եւ
անով պատուիրան երթայ պահէ արքայութիւն: Ասով յայտնի է
որ բառերն եթէ մտաց միջի բանին պէտք եղածն հայեւով լաւ կար-
գով որ չշարեն, բան կամ խօսք չի յառաջանար:

111. Բանն երկու կերպ է, այսինքն՝ կատարեալ եւ անկատար:
Կատարեալ բան այն է՝ որ լսողին միտքն այնպէս կու հանդ-
չեցնէ, որ այլ ուրիշ բանի չի հայեր, ինչպէս այս բանս. Առանց
միտք անելու խօսք խօսողն՝ շատ փորձանքներու կու հանդիպի:

28բ Անկատար բան այն է՝ որ լսողին միտքն չի հանդիպեցներ, ինչ-
պէս այս բանս. Ով որ սէր ունի կարդալու: Ահա այս բանս ան-
կատար բան է. եւ պիտի ուրիշ բան ալ դուրի հետն՝ որ կատարելի.
ինչպէս այս բանս. Ով որ սէր ունի կարդալու, լաւ կու սօրվի:

112. Եւ այս տեղս զիտնալ պէտք է որ բառերն եօթն ցեղ են,
ինչպէս վերն զբեցանք. եւ բանն ՚ի բառերուն կու շինել, ինչպէս
որ ըսանք: Ասկից կու հետեւի որ ան եօթն ցեղ բառերն՝ բանին
մասունքներն լինին: Նորա համար հիմիկս՝ որ բանին ինչ լինիլն
ցոյց տուանք, պէտք է որ հիմակուց յետքը՝ նորա մասունքներուն
ինչ լինիլն մէկ մէկ ցոյց տանք: Եւ բանին մասունքներն, ինչպէս
որ վերն զբեցանք, ասոնք են. այսինքն՝ անուն, դերանուն, բայ,
ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ: Եւ երբ որ
մէկ մարդ մի ասոնց ամէնուն ինչ լինիլն լաւ սօրելնէ, յայն ժա-
մանակն կարէ լաւ վարդով բան շարադրել:

իկ, ակ, ոտ, որդ, իչ, պան, ութիւն, անֆ, ածֆ, ուֆ, ան, ուց, երէն: Եւ ասոնք ամէնքն կարգաւ մէկ մէկ անուան վերայ կու գնենք, օրինակի համար:

30բ

ական
այիւն
եղէն
ւոր
եմի
ցի
ցու
ստան
ոց
ուտ
ուն
ուկ
իկ
ակ
ոտ
որդ
իչ
պան
ութիւն
անֆ
ածֆ
ուֆ
ան
ուց
երէն

դեղական, աշխարհական.
մարդկային, ձմեռային.
հրեղէն, քարեղէն.
դինւոր, լուսաւոր, ձիաւոր.
նոնեմի, տանձեմի, խնձորեմի.
խելացի, մտացի, Գաղատացի.
տիրացու, ապրցու, հնտացու.
Հայաստան, Աճամստան.
ծաղկոց, դպրոց.
քարուտ, փշուտ.
մթում, լուսում.
քուրուկ, մարդուկ.
հացիկ, ջրիկ.
դռնակ, տնակ.
ձիթոտ, եղոտ, կեղտոտ.
առաջնորդ, փոխանորդ.
Լուսաւորիչ, դրիչ.
դռնապան, պարտիզպան.
մարդուրիւն, լաւուրիւն.
փշրանֆ, քրքշանֆ.
նստուածֆ, հայուածֆ.
տաշուֆ, էւելցուֆ.
ուտան, խման.
դեղնուց, ճերմկուց.
հայերէն, դաղմատերէն:

118. Դարձեալ՝ սա ամէն ասած անըններս եղական եւ յողնա-
կան կու լինին:

Եզական են այն ժամանակն՝ երբ որ նոյն իրին մէկ լինին
կու նշանակեն, ինչպէս ասոնք. թուղթ, հաց, քար, ջուր, եւ
այլն:

31ա Զոգնական են այն ժամանակն՝ երբ որ նոյն իրին շատ լինին
կու նշանակեն, | ինչպէս ասոնք. թղթեր, հացեր, քարեր, ջրեր,
եւայլն:

Եւ ասոնք առջի գրքին մէջ, անըններուն հոլովներուն հետ,
տեղն ՚ի տեղն գրուած են:

119. Դարձեալ՝ այս ամէն անըններս եօթն կերպիւ կու հոլո-
վին, թէ՛ եզականն, թէ՛ յողնականն, ինչպէս որ առաջի գրքին
մէջ կերեւին, եւ ամէն կերպն ուրիշ ուրիշ նշանակութիւն ունին:

Անունն երբ որ ուղղական է՝ շիտակ իրին ինչ լինին կու նշա-
նակէ, ինչպէս երբ ասենք՝ մարդ, կրմանանք մարդը, եւ ոչ այլ
ուրիշ բան:

Եւ երբ սեռական է, իրին ունեցածն ցոյց կու տայ. քանզի
երբ ասենք՝ մարդու, չենք շիտակ իմանար մարդը, այլ՝ մարդուն
ունեցածն. ինչպէս որ ասենք՝ մարդու ձեռք, մարդու աչք, եւայլն:

Երբ որ անունն տրական է, իրին բան մի տրելին ցոյց կու
տայ. քանզի երբ ասենք մարդուն, չենք իմանար շիտակ մարդը,
այլ՝ մարդուն մէկ բան մի տրելին, ինչպէս որ ասենք՝ ջուր տուր
այն մարդուն:

Անունն երբ որ հայցական է, իրին խնդրելին ցոյց կու տայ.
քանզի երբ ասենք մարդը, չենք իմանար շիտակ մարդը, այլ՝
մարդուն խնդրելին եւ ուղղելին, ինչպէս երբ ասենք. այն մարդը
կուղեմ:

Անունն երբ որ բացառական է, իրէն բան մի առնելին ցոյց
կու տայ. քանզի երբ ասենք մարդը, չենք իմանար շիտակ
մարդը, այլ՝ մարդըէն բան մի առնելին, ինչպէս երբ ասենք.
այս թուղթս այն մարդըէն առի:

31բ

Անունն երբ որ գործիական է՝ | այն իրովն բան մի լինին
ցոյց կու տայ. քանզի երբ ասենք՝ մարդով, չենք շիտակ իմանար
մարդը, այլ մարդովն մէկ բան մի լինին, ինչպէս երբ ասենք.
այն մարդովն խաղաղութիւն արին:

Անունն երբ որ կոչական է՝ իրին կանչելին ցոյց կու տայ.
քանզի երբ ասենք՝ ո՛վ մարդ, չենք իմանար շիտակ մարդը, այլ՝
մարդուն կանչելին, ինչպէս երբ ասենք. Ո՛վ մարդ, եկո՛ւ դէպ ՚ի
յիս:

120. Դարձեալ՝ անըններն երբ որ կու հոլովին այս մեր աշ-
խարհաբար լեզուին մէջ, տասն կերպ վերջաւորութիւն ունին ի-
րենց եզականի սեռականներն:

Առաջին կերպի սեռականն ի կու վերջանայ, ինչպէս՝ հաց -
հացի, ջուր - ջրի, քար - քարի, եւայլն:

Երկրորդն ու կու վերջանայ, ինչպէս՝ հաւ - հաւու, կով -
կովու, եւայլն:

Երրորդն ան կու վերջանայ, ինչպէս՝ դուռ - դռան, նուռ -
նռան, եւայլն:

Եւ այս երեք կերպս հասարակ են, այսինքն՝ իրենց ներքեւն շատ անըններ ունին, որ այնպէս կու հոլովին:

Չորրորդն ոչ կու վերջանայ, ինչպէս՝ կին - կնոջ:

Հինգերորդն օր կու վերջանայ, ինչպէս՝ հայր - հօր:

Վեցերորդն ուր կու վերջանայ, ինչպէս՝ օր - աւուր:

Եօթներորդն է կու վերջանայ, ինչպէս՝ տիրուհի - տիրուհէ:

Ութներորդն այ կու վերջանայ, ինչպէս Ադամ - Ադամայ: Եւ ասոնց ներքեւ յատուկ անըններն կու հոլովին եւ յոգնակի չունին:

Իններորդն եց կու վերջանայ, ինչպէս՝ բաղնիք - բաղնեց:

Տասներորդն եւց կու վերջանայ, ինչպէս Կիրակոսենք - Կիրակոսեց. եւ այս յետինս եզակի չունի:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՍՆ ԲԱՅԻՆ, ԹԵ ԻՆՉ Է ԵՒ ՔԱՆԻ՝ ԿԵՐՊ ԿՈՒ ԼԻՆԻ:

121. Բայն է մասն բանի, որ իրին արածն կամ քաշածն ցոյց կու տայ, ժամանակի ներքեւ: Ինչպէս երբ ասենք՝ կու սիրեմ, կու սիրես, եւայլն, յայնժամ իրին արարքն ներկայ ժամանակի ներքեւ ցոյց կու տայ. եւ երբ ասենք՝ սիրեցի, սիրեցիր, եւայլն, յայնժամ իրին արարքը անցեալ ժամանակի ներքեւ ցոյց կու տայ. եւ երբ ասենք՝ սիրւեցայ, սիրւեցար, եւայլն, իրին քաշածն անցեալ ժամանակի ներքեւ ցոյց կու տայ:

Բայերուն վերջաւորութիւնքն չորս կերպ են. այսինքն՝ եմ, ամ, ում, իմ. զոր օրինակ՝ կու վառեմ, կիմանամ, կու թողում, կապրիմ, եւ այլն: Ինչպէս որ առաջի գրգին մէջն լծորդւերեն եւ կերեւին:

122. Դարձեալ պէտք է գիտնալ որ բայերուն մէջ ուրիշ է էա-կանն, ուրիշ է ներգործականն, ուրիշ է կրաւորականն, ուրիշ է չէզոքականն, ուրիշ է ձայնակրականն, եւ ուրիշ է անցողականն:

Էական բայն ան է՝ որ իրին լինիլն ժամանակի ներքեւ ցոյց կու տայ, ինչպէս այս. եմ, ես, է, եմք, էք, եմ, եւայլն, որպէս գրած է առաջի գրգի մէջ:

Ներգործական բայն այն է, որ իրին արարքն եւ գործքն այն-պէս ցոյց կու տայ՝ որ նոյն արարքին մէկ ուրիշ քաշող մի կենայ,

32բ ինչպէս երբ ասենք. | կու սիրեմ, կիմանամ, կու թողում, միշտ կիմացւի՝ թէ մէկ ուրիշ քաշող մի կայ, այսինքն՝ ուրիշ մի կայ որ կու սիրւի, կիմացւի եւ կու թողւի: Քանզի երբ լսենք թէ մէկն այրեց, անով կիմանանք թէ մէկ ուրիշ մի այրւեցաւ: Ասորպէս իմանալ պէտք է զամէն ներգործական բայերն:

Կրաւորական բայն այն է՝ որ իրին քաշածն ցոյց կու տայ, այսինքն՝ ուրիշի արարքն այս իրիս վերայ գալն, եւ այս իրս այն ուրիշի արարքին ներքեւ ընկնիլն ցոյց կու տայ, ինչպէս երբ ասենք՝ կայրւի, կիմացւի, կու տեսնւի, եւայլն, միշտ կու հաս-կըցւի այս՝ թէ այրւածն այրողին արարքին ներքեւ է ընկեր, իմացւածն՝ իմացողին եւ տեսնւածն՝ տեսնողին: Ասոր համար է որ որքան ներգործական բայ կայ նէ, իրենց պատասխանող կրա-ւորական ունին:

Ձեզոքական բայն այն է, որ իրին արարքն այնպէս ցոյց կու տայ՝ որ մէկ ուրիշի մի վերայ չի ընկնիլ նոյն արարքն, այլ՝ անողին վերայ կու մնայ, ինչպէս երբ ասենք. կաղօթեմ, կու հա-գամ, կու գնամ, չենք իմանար թէ մէկ ուրիշ իր մի մեր այսպիսի արարքին քաշող կու լինի. այլ մեր աղօթելն, հաղալն, գնալն՝ մեր վերայ կու մնայ: Ասորպէս պէտք է իմացուիլ ամէն չէզո-քական բայեր:

33ա Ձայնակրական բայն ան է, որ իրին արարքն այնպէս ցոյց կու տայ՝ որ նոյն արարքն ոչ ուրիշէն նոյն իրին վերայ եկած է եւ ոչ ի նոյն իրէն ուրիշին վերայ գնացած, | ինչպէս երբ ասենք՝ կապրիմ, կու մտիմ, կու գարշիմ, կու թմրիմ, չենք իմանար թէ այս արարքս մէկ ուրիշէն մեր վերայ կու գայ, եւ կամ մէնէ ու-րիշին վերայ կու գնայ, այլ մեր ապրիլն, նստիլն, պարշիլն եւ թմրիլն մեր վերայ կու մնայ: Ասորպէս պէտք է իմացուիլ ամէն ձայնակրական բայերն:

Անցողական բայն ան է, որ իւր նշանակած արարքն որու վե-րայ որ կու լինի, մէկ ուրիշի մի ձեռք լինիլն ցոյց կու տայ, ինչպէս երբ ասենք՝ կու կիշտացնեմ, կու մատցնեմ, կու գիտցնեմ, թէպէտ կու նշանակեն մէկ մարդու մի կիշտանալն, նստիլն եւ գիտնալն, բայց այն կիշտանալն, նստիլն եւ գիտնալն մէկ ուրիշի մի ձեռք լինիլն ցոյց կու տան. եւ անոր համար անցողական բայ կանւին, զի գործքն՝ ուրիշի ձեռքն կանցնի, եւ ապա թէ կու լի-նի, իբր թէ մէկ ուրիշն բան մի կանէ, որ անով այս իրս այն ա-րարքն կուենայ. ինչպէս երբ որ մէկն ինքիւն կանգնի, կասէ՝ կանգնեցայ. բայց թէ ուրիշն օգնութիւն մի անէ իրեն՝ որ անով ապա թէ կանգնի, յայնժամ օգնութիւն անողն կասէ՝ կանգնեցու-ցի: Ահա այն կանգնելու արարքն թէպէտ կանգնողին է, բայց

կանգնեցնողին ձեռքն եղաւ, նորա համար կանգնեցնել բայս անցողական կասւի:

123. Եւ այս տեղս գիտնալ պէտք է որ այս մեր աշխարհաբար լեզուն մէջ, եւ կամ ըստ վերջաւորող բայերն՝ անցողական դըժ-
33բ ուար կու լինին, բայց ամ վերջաւորողներուն միջէն եւ իմ վերջաւորող ձայնակրականներուն միջէն խիստ շատ կու լինին:

Նաեւ գիտնալ պէտք է որ ամ վերջաւորող բայերուն մէջ կան որ ամ վանկէն յառաջ նու գիր ունին, ինչպէս այս՝ բարկանամ, եւ կան որ չունին, ինչպէս այս՝ փռքտամ: Անոնք որ նու գիր ունին ամ վանկէն առաջ, պէտք է որ այն նու գիրն եւ ամ վանկն միատեղ վերնան եւ ցնեմ ձայնս դուրի անոնց տեղն, որ անցողական լինի, զոր օրինակ՝ կու բարկանամ – կու քարկացնեմ, կիմանամ, կիմացնեմ, եւայլն: Եւ անոնք որ չունին ամ վանկէն յառաջ նու գիր, անոնց միայն մեն գիրն պիտի վերնայ եւ ցնեմ ձայնս դուրի, որ անցողական լինին, զոր օրինակ՝ կու փռքտամ – կու փռքտացնեմ, կու սողամ – կու սողացնեմ:

Բայց իմ վերջաւորող ձայնակրական բայերն երբ անցողական լինին, միշտ իմ վանկն կու վերնայ եւ էցնեմ կամ ցնեմ ձայնս կու դուրի, եւ անով անցողական կու լինին, զոր օրինակ՝ կու մսիւմ – կու մսէցնեմ, կու ծաղկիւմ – կու ծաղկէցնեմ, կու չըջիւմ – կու չըջեցնեմ, կու ծիծաղիւմ – կու ծիծաղցնեմ:

Աս ալ պէտք է գիտնալ՝ որ մեր աշխարհաբար լեզուն մէջ, անցողական բայն կրաւորական չունի:

124. Դարձեալ գիտնալ պէտք է որ բայերն իրենց եղանակ, ժամանակ, դէմ եւ թիւ ունին:

Եղանակն, մեր աշխարհաբար լեզուն մէջ, միայն երեք կերպ է.
34ա Առաջինն սահմանական կասւի, | եւ բայն երբ այս եղանակիս ներքեւ է, ընդարձակ կերպով եւ բացորոշ գիմով իրին արարքն եւ գործքն կու նշանակէ, թէ՛ ներկայ ժամանակի մէջ լինի, թէ՛ անցեալ ժամանակի եւ թէ՛ ապառնի ժամանակի, զոր օրինակ՝ կու վառեմ, կու վառես, կու վառէ. վառեցի, վառեցիր, վառեց. վառեմ, վառես վառէ:

Երկրորդ եղանակն հրամայական կասւի, եւ բայն երբ այս եղանակիս ներքեւ է, չի նշանակեր իրին արարքն, այլ այն արարքն ուրիշի մի հրամայելին ցոյց կու տայ, զոր օրինակ՝ վառէ՛, մի՛ վառեր, քո՞վ վառէ, քո՞վ չվառէ: Եւ այս տեղս վառելու գործքն չի իմացելի, այլ նոյն գործքն ուրիշի մի հրամայելին կիմացելի:

Երրորդ եղանակն աներեւոյթ կասւի. եւ բայն երբ այս եղանակիս ներքեւ է, թէպէտ կու նշանակէ իրին արարքն եւ գործքն, բայց չի որոշեր եւ չի երեւցներ՝ թէ՛ այն արարքն ո՛ր անձնէ կու լինի, ա՞յս անձնէս՝ թէ՛ այդ անձնէդ, թէ՛ այն անձնէն. նորա համար աներեւոյթ կասւի, այսինքն՝ դէմք չերեւցնող, զոր օրինակ՝ վառել: Եւ անքնի պէս կու հոլովի եւ կու լինի՝ վառելու, վառելով, վառելիմի: Եւ այս հոլովածներս դերբայք կասւին, ինչպէս որ առաջին գրգին մէջ գրուած են:

125. Բայերուն ժամանակն վեց կերպ է, այսինքն ներկայ, անկատար, կատարեալ, յարակատար, գերակատար եւ ապառնի:

34բ Բայն երբ որ ներկայ ժամանակի ներքեւ է, | արարքին ներկայապէս լինիլն ցոյց կու տայ, զոր օրինակ՝ սահմանական եղանակ՝ կու վառեմ, այսինքն՝ հիմիկս կու վառեմ. հրամայական եղանակ՝ վառէ՛, այսինքն՝ հիմիկ վառէ:

Երբ որ անկատար ժամանակի ներքեւ է, արարքին սկսելին ցոյց կու տայ, այնպէս որ գեռ չէ կատարւեր, զոր օրինակ՝ կու վառէի, կու վառէիր, կու վառէր:

Երբ որ կատարեալ ժամանակի ներքեւ է, արարքին եղած վըճարւած չինիլն ցոյց կու տայ, զոր օրինակ՝ վառեցի, վառեցիր, վառեց:

Երբ որ յարակատար ժամանակի ներքեւ է, արարքին շատոնց եղած լինիլն ցոյց կու տայ, զոր օրինակ՝ վառերեմ, վառերես, վառերէ:

Երբ որ գերակատար ժամանակի ներքեւ է, արարքին խիստ շատոնց եղած լինիլն ցոյց կու տայ, զոր օրինակ՝ վառերէի, վառերէիր, վառերէր:

Երբ որ ապառնի ժամանակի ներքեւ է բայն, այնպէս ցոյց կու տայ զարարքն, որ գեռ եւս չէ եղեր, բայց ըլլալու է, ինչպէս՝ վառեմ, վառես, վառէ, այսինքն՝ պիտի վառեմ:

126. Բայերուն դէմքն երեք են:

Առաջինն այն է՝ ուսկից որ կու ասուի խօսքն, ինչպէս այս. կու վառեմ, այսինքն՝ ես կու վառեմ:

Երկրորդն այն է՝ որու հետ է խօսքն, կամ դէպ ի ո՛վ է խօսքն, ինչպէս այս. կու վառես, այսինքն՝ դու կու վառես:

Երրորդն այն է՝ որոյ վերայ է խօսքն, ինչպէս այս. կու վառէ, այսինքն՝ ան կու վառէ:

127. Թիւ բային երկու են, այսինքն՝ եղական եւ յոգնական: Երբ որ արարքին անողն մէկ մի է, բայն եղական է, զոր օրինակ. վառեցի, վառեցիր, վառեց. այսինքն՝ ես վառեցի, դու վառեցիր, Պետրոսն վառեց, կամ ան մարդն վառեց: Ահա ինչպէս են, դուն, Պետրոսն կամ մարդն՝ եղական են, այնպէս եւ բայն եղական է:

Եւ երբ արարքին անողներն շատ անձինք են եւ մէկտեղ կան, այն ժամանակն՝ բայն յոգնական է, զոր օրինակ. մեմք վառեցանք, դուք վառեցիք, Պետրոսն ու Պողոսն վառեցին, կամ անոնք վառեցին: Ահա ինչպէս մեքն ու դուքն եւ անոնքն յոգնական են, այնպէս եւ բայերն յոգնական են:

128. Նորա համար երբ որ հարցւի թէ բայս այս վառեցի՝ ի՞նչ եղանակ է, ի՞նչ ժամանակ է, ի՞նչ դէմ է եւ ի՞նչ թուով է, կամ ի՞նչ առիթ է, պէտք է այսպէս պատասխանել. Եղանակն՝ առհասարակ է, ժամանակն՝ կատարեալ, Դէմն՝ առաջին, Թիւն՝ եղական, եւ Սեռն՝ ներգործական:

Եւ թէ հարցւի. ի՞նչ է այս բայս՝ կադօքէիք, պատասխանելի է այսպէս. Եղանակն՝ սահմանական է, ժամանակն՝ անկատար, Դէմն՝ երկրորդ, Թիւն՝ յոգնական, եւ Սեռն՝ չէզոքական:

Եւ թէ հարցւի. ի՞նչ է այս բայս՝ քոզ մատին, պատասխանելի է այսպէս. Եղանակն՝ հրամայական է, ժամանակն՝ ներկայ, Դէմն՝ երրորդ, Թիւն՝ յոգնական, եւ Սեռն՝ ձայնակրական:

Ասորպէս իմացելի պէտք է ամէն բայերուն վերայ:

Եւ այսչափս կարճ ի կարճոյ բաւական է միտք ունողներուն:

129. Դերանունն, ընդունելութեան, նախադրութեան, մակբայի եւ շարկապի վերայ առաջին գրգին մէջ | ինչ որ պրեր ենք, բաւական է. քանզի նոցա վերայ այլ առիթ բան խօսելու հարկաւորութիւն չիկայ. նորա համար սկսինք շարադրելու վերայ խօսիլ եւ տեսնել թէ մասունք բանին ինչպէս պիտի միաւորին մէկ մէկի հետ:

ԳԼՈՒԽ Ը.

ՎԱՍՆ ՄԷԿՏԵՂ ԲԵՐԵԼՈՒ ԵՒ ՇԱՐԵԼՈՒ ԶՄԱՍՈՒՆՔՆԵՐՆ ԲԱՆԻՆ:

130. Ամէն բայ՝ որ խօսից մէջ կու դրւի, իրմէ յառաջ մէկ ուղղական անուն մի պիտի ունենայ, զոր օրինակ՝ երբ ասենք գնաց, կիմացւի թէ մարդն գնաց կամ ձիւն կամ ինչ եւ իցէ ուրիշ:

մէկ իր մի: Նորա համար՝ թէ որ յայտնապէս չէ դրւած անունն այն, պէտք է որ խելքի ուժով իմացւի. եւ թէ յայտնապէս դրւած է, յայնժամ կերելի, զոր օրինակ՝ Պետրոս գնաց: Արդ՝ այսպիսի անունս կու կոչւի անուն բայի կամ գործիւն տէր:

131. Եւ դիտնալ պէտք է՝ զի անուն բային պիտի որ դիմով եւ թուով միաբանի հետ բային. այսինքն՝ թէ անունն առաջին դէմ է, բայն ալ այնպէս լինի. թէ երկրորդ դէմ է կամ երրորդ, բայն ալ այնպէս լինի. թէ անունն եղական է կամ յոգնական, բայն ալ այնպէս լինի: Զոր օրինակ, ես կու գնամ, դու կու գնաս, մա կու գնայ կամ Պետրոսն գնաց, դու Պողոսդ գնացիր, եւ Յօհաննէսս եկի, եւայլն: Մեք տեսանք, դուք տեսաք, անոնք տեսան, եւայլն:

Եւ թէ հանդիպի որ երկու եղական անուն միատեղ գան, եւ մէկ բայի մի անուն լինին, այն ժամանակն՝ բայն պիտի յոգնական լինի, զոր օրինակ՝ ես եւ դու գնացանք, դու եւ մա գնացիք, Պետրոսն եւ Պողոսն գնացին:

Եւ ինչպէս որ կու երեւի դրւած օրինակէս, եթէ երկու անուն մէկտեղ որ գան, մէկն առաջին դիմով եւ մէկալն երկրորդ դիմով, բայն առաջին դիմին պիտի հետեւի, զոր օրինակ՝ ես եւ դու գնացանք:

Եւ թէ երկու անուն՝ մէկն երկրորդ դիմով լինի եւ մէկալն երրորդ դիմով, բայն երկրորդ դիմին պիտի հետեւի, զոր օրինակ՝ դու եւ մա գնացիք:

132. Եւ այս տեղս դիտնալ պէտք է՝ որ չէ թէ միայն անունն եւ դերանունն կու լինին անուն բայի, այլ եւ ընդունելութիւնն, եւ աներեւոյթ բայն, զոր օրինակ՝ Լացողն կանգնեցաւ, ծիծաղողն մտաւ, բամբասելն անեցաւ, մխիթարելն պակսեցաւ:

133. Դարձեալ՝ այն անուններն որ եղական են, բայց շատ իր կու նշանակեն, ինչպէս ասոնք երկու, երեք, տասն, երբ անուն բայի լինին, պէտք է որ բայն յոգնական լինի, զոր օրինակ՝ Երկու եմ ձեռք մարդու, տասն եմ պատգամքն Աստուծոյ, երեքն ալ խօսեցան:

134. Դարձեալ՝ դիտնալ պէտք է որ ամէն ածական անուն՝ իրեն գոյական անուն ունի, կամ յայտնի, ինչպէս ասոնք. կարմ մարդ, կարմիր կտաւ, | եւայլն. եւ կամ ծածուկ, ինչպէս այս՝ կարմն երկայնին քով մի՝ կանգնեցներ: Ահա այս տեղս կարմն եւ

երկայնն ածական անուն են, եւ իրենց գոյականն ծածուկ է, բայց խելքի ուժով կիմացւի՝ թէ կարն մարդն երկայն մարդու քով մի՛ կանգնեցնէր:

135. Արդ՝ գիտնալ պէտք է որ մեր գրաբառ լեզւին մէջ, ածական անունն երբոր գոյականին ետեւէ կու գրւի, միշտ թուով եւ հոլովով պէտք է հետն համաձայնիլ, թէ՛ յայտնի լինի գոյական անունն, թէ՛ ծածուկ. բայց այս աշխարհաբար լեզուի մէջ ածականներն միշտ գոյականէն յառաջ գրւելով, եթէ գոյականն կու գրւի յայտնի, ածական անուններն միշտ ուղղական եւ եղական մնալով կու համաձայնին գոյականին հետ, թէպէտ հոլոված լինի գոյականն, նաեւ յոգնական, ինչպէս ասոնք. Կարն մարդիքոց ուտից ներքեւն բան դրէք. այս կարմիր կտաւներուս մէջէն լաւը գտնեցէք: Ահա կարնն ածական էր մարդուն, որ ոչ հոլովով եւ ոչ թուով համաձայնեցաւ. եւ թէ համաձայնեցնենքէ՛ կաւրի, ինչպէս այս. Կարներու մարդիքոց ոտից ներքեւն բան դրէք: Բայց թէ գոյական անունն ծածկապէս լինի, այն ժամանակ ածականն պիտի այնպիսի հոլովով եւ թուով գրւի, ինչպէս որ գոյականն կու գրւէր՝ եթէ յայտնի լինէր, զոր օրինակ. Կարներուն ոտից ներքեւն բան դրէք, կարմրներուն միջէն լաւն ընտրեցէք: Ասոնցպէս պէտք է իմանալ զամէն | ածական անուններն, որ գոյականի հետ կու գրւին:

136. Նաեւ այս ստացական եւ ցուցական դերանուններս, իմ, քո, մեր, աս, ատ, ան, ածական անուններուն կանոնովն կու գրւին գոյականներուն հետ, զոր օրինակ՝ իմ ձեռքէն առաւ, իմ ժողովածներն խլեց, քո տղոցն տուաւ, մեր տներուն հաւնեցան, ձեր աթոռներուն վերայ նստան, աս տղոցմէս հեռու կեցիր, ատ մարդիքոցդ խօսիցն անկաճ դիր, ան գրգռն ընծի բեր: Ահա այս խօսքերուս մէջ, իմ, քո, մեր, ձեր, աս, ատ, ան, ուղղական եւ եղական մնալով՝ հոլոված եւ յոգնական գոյական անուններուն հետ լաւ միաբանեցան:

137. Դարձեալ՝ մեր գրաբառ լեզուին մէջ յարաբերական դերանունս այս՝ որ, թուով կու համաձայնի իւր յառաջ բերած անունին հետ. բայց այս աշխարհաբար լեզուի մէջ, յարաբերական որն, այսինքն՝ անուն յառաջ բերող որն միշտ եղական եւ ուղղական մնալով, քան զինքն յառաջ եղող անունն յառաջ կու բերէ, ինչպէս այս. Ձեր տղաներն՝ որ եկին մեր տունն, այն մարդիքներն՝ որ ելան ձեր տնէն՝ ամէնքն հարբած էին: Ահա որն մնալով

ուղղական եւ եղակի, տղաներն եւ մարդիքներն յառաջ կու բերէ, որ ուղղական եւ յոգնական են:

138. Դարձեալ. պատասխանին հարցմանն հետ պէտք է որ թուով եւ հոլովով համաձայնի, նաեւ իրին յարմար լինի, զոր օրինակ՝ այս հարցմանցս. Ո՞վ է գլխաւորն առաքելոց: Պատասխանի՝ Պետրոս: Հարցումն՝ Որո՞ւ | որդի է: Պատասխանի՝ Յօնանու: Հրց. Որո՞ւմ աշակերտ է: Պտ. Քրիստոսի: Հրց. Ձո՞ւ կու սիրէր: Պտ. ՂԻ՛րիստոս: Հրց. Ուսկի՞ց հաստատեցաւ գլուխ առաքելոց: Պտ. Քրիստոսէ: Հրց. Որո՞ւ յայտնի է: Պտ. Աւետարանովն:

Եւ թէ հարցմունքն միջամէջ յոգնակի լինին, պատասխանին այլ յոգնակի կու լինի, ինչպէս ասոնք. Հրց. Ո՞վ են դուռն եղողներն: Պտ. Տղան են: Հրց. Որո՞ւ տղաք են: Պտ. Պետրոսին: Հրց. Որո՞ւմ աշակերտ են: Պտ. Տիրատուրին: Հրց. Ի՞նչ կուզեն: Պտ. Ձուր կ'ուզեն: Հրց. Որ հորէն: Պտ. Մեծ հորէն: Հրց. Ինչով պիտի հանեն: Պտ. Փարչով. եւայլն:

Վերն ասի՝ թէ իրին ալ յարմար պիտի լինի պատասխանին. քանզի թէ հարցմունքն գոյականի պէս է, պատասխանին ալ այնպէս պիտի. թէ ածական կերպով է, պատասխանն ալ այնպէս պիտի. թէ տեղ ցուցանող է, պատասխանն ալ տեղի անունով պիտի տրւի. եւ թէ այլ ուրիշ կերպով է, անոր յարմար պատասխանի պէտք է, զոր օրինակ. Հրց. Ի՞նչ է այն երեւցածն: Պտ. Մարդ է: Հրց. Ի՞նչպէս մարդ է: Պտ. Լաւ է: Հրց. Ո՞ւր կու գնայ: Պտ. Տուն: Հրց. Ուսկի՞ց կու գայ: Պտ. Յեկեղեցուն: Հրց. Ընտո՞րն գնաց: Պտ. Ասանկն: Հրց. Ե՞րբ կու դառնայ: Պտ. Վաղն: Հրց. Քանի՞ տղայ ունի: Պտ. Հինկ: Հրց. Ո՞ր տեղացի է: Պտ. Էրզրումցի. եւայլն:

139. Դարձեալ գիտնալ պէտք է որ երկու գոյական անունն՝ երբ որ նոյն հոլովով մէկ մէկ գոյականի հետ գրւին, այն ժամանակն պէտք է որ շաղկապ ունենան իրենց մէջ, ինչպէս ասոնք. Կիրակոսն եւ Պետրոսն եկին, եւ իրենց հետ բերին բամպակ ու կտաւ, լեղակ եւ սօրուն: Պետրոսին եւ Պողոսին տուի: Կիրակոսէն եւ Յօհանէն առի: Կտաւն եւ բամպակն ուղեցի: Լեղակով ու սօրունով գնեցի: Ահա այս խօսքերուս մէջ՝ երկու գոյական անունն նոյն հոլովով միատեղ գրւան այս շաղկապներովս. եւ, ու:

Բայց թէ երկու գոյական անունն զանազան հոլովով գրւին միատեղ, նոցա մէջն շաղկապ պէտք է, ինչպէս ասոնք. Մարդուն աչքն, Պետրոսի տունն, Պետրոսի տնէն, Պետրոսի ձեռքն, եւ

այլն: Ասոնցպէս պէտք է իմանալ երբ երկու ածական անուն միատեղ դրին. զոր օրինակ. կարճ ու երկան, մեծ ու սղոտիկ, լաւ եւ վատ, մեծի ու սղոտիկի, լաւէն եւ վատէն, մեծով ու սղոտիկով, եւայլն: Բայց թէ զանազան հոլովով լինին, առանց չաղկապի միատեղ կու դրին, զոր օրինակ. կարմրեցաւ լաւն, մեղմկեցաւ քաւկն, կարմրեցաւ հաստն, եւայլն:

ԳԼՈՒԽ Թ.

ՎԱՍՆ ԲԱՅԵՐՈՒՆ, ԹԷ ԻՆՁՊԵՍ ՀՈԼՈՎՈՎ ԱՆՈՒՆ ԿՈՒՋԵՆ՝
ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

38բ 140. Նախ գիտնալ պէտք է զի կան բայեր՝ որ ուղղակիան հոլովով անուն կուղեն, ինչպէս այս բայերս. | Եմ, կու մնամ, կամ կու նստիմ, կու քայլեմ, կու կոչուիմ, կանուանիմ, կասուիմ, կու քնանամ, կու գնեմ, կու ծախեմ, եւայլն, զոր օրինակ. Ես եղայ քահանայ, դու մնացիր աշխարհական, Պետրոսն նստեր է դատարկ, ձեր տղաքն կու քայլեն արագ, քո եղբայրն կու կոչի աղքատ, հայրդ կանուանի հարուստ, դու կասուիս խելօք, որդիդ կու քնանայ, ես գնեցի ածան, դու կու ծախես թանկ, եւայլն:

39ա 141. Դարձեալ շատ բայեր կան՝ որ տրակիան հոլովով անուն կուղեն, ինչպէս այս բայերս. նեղանալ, բարկանալ, ընդդիմանալ, երկրպագել, հասնիլ, ծառայել, համբերել, ողորմիլ, ներել, հակառակիլ, հանդիպիլ, հետեւիլ, վնասել, ցանկալ, փափաքիլ, օգնել, հնազանդիլ, հաւատալ, խոնարհիլ, հաւասարիլ, հաւնիլ, եւայլն, զոր օրինակ. Այս մարդս նեղացաւ ձեզի, Պետրոսն բարկացաւ մեզի, մեք ընդդիմացանք գողերուն, այն մարդիքն երկրպագեցին քարերուն, մեք հասանք ձիաւորներուն, դուք ծառայեցիք տղաքներուն, Պետրոսն համբերեց ձեր խօսքերուն, դուք ողորմեցաք աղքատներուն, մեք ներեցանք ձեզի, ոմանք հակառակեցան մեզի, հանդիպեցան ձեզի, հետեւեցան ձեր խօսքերուն, վնասեցին մեր արտերուն, ցանկացան գինուն, փափաքեցան կերակրին, օգնեցին անոնց, հնազանդեցան ձեզի, հաւատացին մեզի, խոնարհեցան Մեծաւորին, հաւասարեցան ձեզի, հաւանեցան մեզի:

142. Դարձեալ շատ բայեր կան՝ որ հայցակիան հոլով կուղեն, ինչպէս այս բայերս. սիրել, ասել, տեսնել, լալ, գրել, փորել, վարել, գովել, արծել, փորձել, հնձել, ընդունիլ, առնել, գլորել:

փշրել, պատել, հագնիլ, թողուլ, սրբել, սպաննել, բանալ, կատարել, ճանչնալ, օրհնել, շինել, քակել, ուտել, ծամել, խմել, կարդալ, խնջել, աւելել, բերել, տանիլ, եւ այլ ամէն ներգործական բայեր, զոր օրինակ. Ես Պետրոսը կու սիրեմ, նա զիս կատէ, ես նորա ոտքը լուացի, նա իմ գիրը գրեց, նա գետինը կու փորէ, արտը կու վարէ, լծվարութիւնը կու գովէ, կովերը կարծէ, մարդը կու փորձէ, ցորենը կու հնձէ, լաւերը կընդունի, աղէկները կառնէ, վատն կու գլորէ, հացը կու մանրէ, բաղարջը կու փշրէ, եկողը կու պատուէ, լաթերը կու հագնի, բանը կու թողու, ոտքը կու սրբէ, լւերը կսպաննէ, ձեռքը կու բանայ, գործքը կու կատարէ, լաւը կու ճանչնայ, տղաքը կօրհնէ, տունը կու շինէ, խանութը կու քակէ, հացը կուտէ, միտը կու ծամէ, ջուրը կու խմէ, համարը կու կարդայ, քիթը կու խնջէ, տունը կաւէ, գինին կու բերէ, գաւաթը կու տանի, եւայլն:

39բ 143. Դարձեալ շատ բայեր կան՝ որ բացառակիան հոլով կուղեն, ինչպէս ասոնք. զըզիլ, մոլըրիլ, ձանձրանալ, հրաժարիլ, զատիլ, դողալ, արթննալ, | փախչիլ, պահել, վախնալ, հեռանալ, զրկիլ, ելլել, առնել, եւայլն, զոր օրինակ. Չարերուն զզուեցայ, ճամփուն մոլըրեցայ, քալելուն ձանձրացայ, չարէն հրաժարեցայ, ընկերէս զատուեցայ, ցրտուն դողացի, քնուս արթընցայ, տնէն փախայ, անոնցմէ պահեցայ, գողերուն վախեցայ, քովերուն հեռացայ, սեղանէն զրկեցայ, քաղքէն ելայ, ձեռընուն առի, եւայլն:

144. Դարձեալ շատ բայեր կան՝ որ գործիակիան հոլովով անուն կուղեն, ինչպէս ասոնք. հարբիլ, զօրանալ, լցիլ, մեծնալ, ածիլ, հարստնալ, առողջանալ, զարդարելիլ, աղքատնալ, գիրնալ, եւայլն, զոր օրինակ. Պետրոսն գինով հարբեցաւ, մարմնով զօրացաւ, լատրկով լցաւ. Պօղոսն տարով մեծցաւ, բարեգործութենով հարստացաւ, առաքինութեամբ աճեցաւ, հոգով առողջացաւ, շնորհօք զարդարեցաւ. Կիրակոսն հոգով աղքատցաւ, մարմնով գիրցաւ, եւայլն:

Ասոնցպէս պէտք է իմանալ զամէն բայեր, որ կերպ կերպ հոլով կուղեն, ինչպէս որ իրենց յարմար է. եւ միտք ունողն՝ այսչափ գրածովս մնացածները կու հասկընայ:

145. Եւ այս գրածովս կ'իմացւի՝ որ ածական անուններն բայ եղած ժամանակն ինչ հոլով որ կուղեն, երբ որ բայ չեն՝ այն աստեան ալ նոյն հոլովը կուղեն, զոր օրինակ՝ այս բայերս, Ամառիլ, հաւասարիլ տրական հոլով կ'ուղեն, ինչպէս այս. Կու նմա-

նիս Պետրոսին, կու հաւասարիս Պօղոսին: Այսպէս եւս այս ածա-
կան անըններս՝ նման, հաւասար, տրական հոլով կուղեն, զոր
օրինակ՝ նման եղբորդ, հաւասար հօրդ: Այսպէս եւս, ինչպէս
այս բայերս՝ սպիտակամալ, սեւմալ, դործիական հոլով կուղեն,
40ա զոր օրինակ՝ Սպիտակացաւ ձեռքով, սեւցաւ մարմնով: | այնպէս
եւ այս ածականներս՝ սպիտակ, սեւ, դործիական հոլով կուղեն,
զոր օրինակ՝ Սպիտակ ձեռքով, սեւ լաթով, եւայլն:

146. Դարձեալ գիտնալ պէտք է՝ զի բայերուն մէջ կան բա-
յեր, որ հայցական հոլով առնելնուն յետքն, տրական հոլով ալ
կուղեն, ինչպէս ասոնք. գիտցնել, տալ, ցըցընել, հրամայել, ե-
րեցնել, յայտնել, մատնել, զոր օրինակ. Գիտցուցի զայս քեզի,
թուղթը տուի եղբորդ, դուռը ցըցուցի հօրդ, զայն հրամայեցի
որդուդ, զիս երեցուցի աշակերտիդ, խորհուրդս յայտնեցի ընկե-
րիդ, զքեզ մատնեցի վարպետիդ, եւայլն:

147. Դարձեալ կան բայեր՝ որ հայցական հոլով առնելնուն
յետքն, նախդրիւ տրական կուղեն, ինչպէս ասոնք. ձգել, ժողվել,
դառցնել, մտցնել, թափել, բարձրցնել, դրկել, իջեցնել, թռչիլ,
զոր օրինակ. Փարչը հորն ձգեց, քարերը դողն ժողվեց, տղակ-
ները տուն դարձուց, զիս բաղնիք մտուց, ջրերը գետինն թափեց,
ձայնը երկինքն քարձրցուց, զձեզ տուն դրկեց, զանոնք վար ի-
ջեցուց, զասոնք երկինք թռուց:

Եւ այս տեղս գիտնալ պէտք է՝ որ մեր աշխարհաբար լեզուին
մէջ, ներդործութեամբ նախդրիւ տրական չլինելով, այսպիսի
տեղանքն՝ զօրութեամբ տրական կու կոչին այն անընները, որ
այսպիսի բայերու խնդիր կու լինին:

148. Դարձեալ կան բայեր՝ որ հայցական հոլով առնելնուն
էտեւ, բացառական կուղեն, ինչպէս ասոնք. աղատել, արձկել,
40բ խնդրել, հեռացնել, ուղել, հանել, զատել, դուրս անել, | զոր
օրինակ. Կաղատեմ զքեզ անկից, կարճկեմ զնա մեղքէն, քէնէ զայս
կու խնդրեմ, որոգայթը քէնէ հեռացուր, գիրը ուղեցի անոնցմէ,
դրամը հանեցի քսակէն, աղէկը զատեցի գիշէն, դողը դուրս արի
տնէն, եւայլն:

149. Դարձեալ կան բայեր՝ որ հայցական հոլով առնելնուն
էտեւ, գործիական կուղեն, ինչպէս ասոնք. հարբեցնել, այրել,
կապել, զարդարել, կտրել, կերակրել, լնել, փակել, տաքցնել,
ծամել, զոր օրինակ. Զինքն հարբեցուց գինով, տունը այրեց կը-
րակով, ձեռքը կապեց չուանով, գլուխը զարդարեց ծաղկներով,

մատը կտրեց թրով, զքեզ կերակրեց մեղրով, ձուկը տաքցուց
բոցով, միսը ծամեց ափսով, եւայլն:

150. Եւ այս տեղս գիտնալ պէտք է՝ որ մեր աշխարհաբար
լեզուին մէջ, բայերուն խնդիրներն շատ անգամ բայէն յառաջ կու
ընկնին, եւ լաւ հայիլ պէտք է՝ որ չկարծուին թէ անուն բայի են:
Նաեւ գիտնալ պէտք է՝ որ անուն բային շատ տեղ զօրու-
թեամբ է, եւ մտքով պիտի իմացւի. եւ քիչ տեղ կու հանդիպի
որ ներդործութեամբ եւ յայտնապէս անուն բայի դուրի՝ այս մեր
աշխարհաբար լեզուին մէջ:

ԳԼՈՒԽ Ժ.

ԹԵՆ ԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՈՐՊԻՍԻ ՀՈԼՈՎ ԿԱՌՆՈՒՆ:

151. Նախ գիտնալ պէտք է՝ զի նախադրութեանց մէջ շատ
նախադրութիւն կան, որ սեռական հոլով կաննուն, ինչպէս ա-
41ա սոնք. մէջ, ներքեւ, վրայ, առջեւ, էտեւ, | առջեւէն, էտեւէն
համար, տեղն, դիմաց, ըստ, քով, զոր օրինակ. Ծովուն մէջ մը-
տաւ, նաւին ներքեւ անցաւ, ջրին վրայ եղաւ, իմ առջեւ բուսաւ,
նաւին էտեւն պահեցաւ, անոնց առջեւէն անցաւ, ձեր էտեւէն
պըտըտեց, յիմարութեան համար այնպէս արաւ, լալու տեղն՝ կու
ծիծաղի, այն մարդկանց դիմացն կու խաղայ, ըստ մեր դատաս-
տանին՝ ծեծի արժանի է, խենթին քով կանգներ է, եւայլն:

152. Մէկ քանի նախադրութիւն ալ կան՝ որ տրական կուղեն,
ինչպէս ասոնք. հետ, մօտ, առանց, դէմ, զոր օրինակ. Քեզ հետ
կու խօսիմ, ձեզ մօտ կու նստիմ, առանց ձեզ՝ հաց չեմ ուտեր,
ձեզ դէմ չեմ խօսիր:

153. Մէկ քանի նախադրութիւն ալ կան՝ որ նախդրիւ տրա-
կան կուղեն, ինչպէս ասոնք. հիմնօր, դէպ, զոր օրինակ. հիմնօր
'ի տունն ճամփեց, դէպ 'ի շուկայն գնաց:

154. Մէկ նախադրութիւն ալ կայ՝ որ հայցական հոլով կառ-
նու, ինչպէս այս՝ քան, զոր օրինակ. Այս թուղթս քան զայն
թուղթն լաւ է, փոքր եղբայրդ քան զմեծն խելօք է:

Եւ այս տեղս գիտնալ պէտք է՝ որ հայցական հոլովն միշտ
զայս նախդիրս զ պիտի ունենայ այսպիսի տեղումնքն, զոր օրի-

նակ. Պետրոսն լաւ է քան զԿիրակոսն, հացն լաւ է քան զմիսն: Եւ ոչ է պարտ ասել. հացը լաւ է քան միսը:

155. Մէկ քանի նախադրութիւն ալ կան՝ որ բացառական հոլով կառնուին, ինչպէս ասոնք. դուրս, յետքը, հետու, 'ի գաւտ, զոր 41p օրինակ. Տնէն դուրս, հացէն յետքը, | քաղքէն հեռու, ջրէն 'ի գաւտ:

156. Երկրորդ՝ գիտնալ պէտք է որ մեր գրաբառ լեզուին մէջ, այս երկու նախադրութիւնս՝ յետ, արտաքոյ, սեռական հոլով կառնեն. եւ ասոնք՝ որ այս աշխարհաբար լեզուին մէջ կասուին յետք, դուրս, բացառական հոլով կառնեն, ինչպէս որ վերը դրուեցաւ: Նաեւ այս նախադրութիւնս՝ ըստ, գրաբառ լեզուին մէջ, տրական հոլով կառնու, եւ այս տեղս՝ սեռական:

157. Երրորդ՝ գիտնալ պէտք է զի մէկ քանի գրեր ալ կան, որ նախադրութիւն կասուին՝ անընդուն յառաջը դրուելուն համար, եւ ասոնք խնդիր չեն առներ, այլ միայն անընդուն հոլով կու շինեն, ինչպէս ասոնք՝ գ, 'ի զոր օրինակ. գրեզ, 'ի քեզ: Եւ ահա կերեւի որ զան հայցական հոլովն 'կու շինէ, եւ ինին՝ գնախդրիւ տրականը: Բայց թէ՛ գան, թէ՛ ինին, այս մեր աշխարհաբար լեզուին մէջ, քիչ տեղ պէտք կու լինի անընդուն հոլովն շինելու. այլ միայն դերանուան հայցական եւ նախդրիւ տրական հոլով կու շինեն:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՍՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ, ԹԵ ԲԱՍԵՐՆ ԻՆՁՊԵՍ ՊԻՏԻ ՇԱՐԻԻՆ, ԵՒ ԻՆՁՊԵՍ ՊԻՏԻ ՔԱԿԻԻՆ, ԵՒ ԻՆՁ ԿԵՏԵՐՈՎ ՊԻՏԻ ԳՐԻԻՆ:

158. Նախ գիտնալ պէտք է՝ որ ամէն լման խօսքի մէջ, 'ի հարկէ կու գաւի մէկ բայ մի, եւ այն բայն 'ի հարկէ իրեն տէր ունի, որ անուն-բայի կասուի: Նաեւ խնդիր ունի՝ մէկ կամ երկու. ինչպէս ահա այս օրինակովս կերեւի. | Կիրակոսն գիր կու գրէ: Ահա այս տեղս՝ Կիրակոսն անուն-բայի է. կու գրէ՝ բայ է, եւ գիրն՝ հայցական խնդիր բային:

Բայց երբեմն խօսից մէջ պէտք կու լինի մակբայ, եւ անուն-բային կամ խնդիրն իրենց ածական կուռնենան, եւ բայն երկու

խնդիր կուռնենայ: Եւ ահա նոյն մեր ասած խօսքին վերայ ասոնք ալ աւելցնելով՝ զայս օրինակս կու դնենք. Սրամիտ Կիրակոսն ահա իր հօրն լաւ գիր մի կու գրէ: Սրամիտն՝ ածական է անընի բային. ահա՝ է մակբայ. հօրն՝ է տրական, երկրորդ խնդիր բային. իր՝ է ածական հօրն. լաւն է ածական գրին. մի՝ է մասնական անուն, ինչպէս որ գրաբառին մէջ է իմն. եւ երբեմն մը կասուի, այսինքն՝ լաւ գիր մը: Եւ այսպիսի տեղս, թէ՛ մի ասուի, թէ՛ մը ասուի, նոյն են, եւ իբրեւ ածական են՝ ինչ անընի հետ որ դրուին:

159. Դարձեալ՝ երբեմն կու հանդիպի որ անուն բային կամ խնդիրն իրենց հետ սեռական հոլովով անուն մը կուռնենան. եւ այնպիսի անունն յատկացուցիչ կասուի: Եւ ասկից 'ի զատ, շատ անգամ, խօսից մէջ, նախադրութիւն կու մտնէ եւ խնդիր կառնու, ինչպէս ահա ասոնց օրինակն ալ կու դնենք. Պետրոսնց սրամիտ Կիրակոսն ահա մեծ սեղան տախտակին վերայ՝ իր հօրն լաւ պատմութեամ գիր մի կու գրէ: Պետրոսնցն է յատկացուցիչ Կիրակոսին. վերայ է նախադրութիւն, եւ մեծն՝ է ածական սեղան տախտակին: Պատմութեամ է յատկացուցիչ գրին. սեղան տախտակին՝ է սեռական խնդիր նախադրութեան. եւ մեծն է ածական՝ սեղան տախտակին: Պատմութիւն է յատկացուցիչ գրին:

160. Դարձեալ՝ այսպիսի կատարեալ խօսքս երբ որ 'կու վերջանայ, պիտի որ միջակէտ դրուի, եւ ապա ըստ | որում որ պէտք է, շաղկապ առնուի եւ ուրիշ խօսք սկսուի, ինչպէս որ ահա օրինակի համար կու դնենք. Պետրոսնց սրամիտ Կիրակոսն, ահա մեծ սեղան տախտակին վերայ իր հօրն լաւ պատմութեամ գիր մի կու գրէ. եթէ դու ալ կուգես գրել, գնա անոր քով միտ գրէ: Ահա այս խօսիցս մէջ, եթէն շաղկապ է, ալն 'եւ շաղկապ է, որ զվերի խօսքն այս խօսքիս հետ 'կու կապեն: Դում՝ անուն բայի է. կուգեսն՝ բայ է. գրելն՝ աներեւոյթ բայ է, բայց այս տեղս բային խնդիր եղեր է, եւ ինքն ալ գորութեամբ խնդիր ունի, զայս՝ գիր. այսինքն՝ գիր գրել. եւ այս տեղս ստորակէտ պիտի դրուի, զի խօսքն անկատար է: Գնա՝ բայ է. անուն-բային գորութեամբ կայ՝ դու. խնդիր բային ալ գորութեամբ կայ՝ այն տեղն: Քովն՝ նախադրութիւն է. անորն՝ խնդիր նախադրութեան է. միտն՝ բայ է. անուն բային գորութեամբ կայ՝ դու. եւ խնդիր բայի կու լինի նախադրութիւնն իր խնդրովն, այսինքն՝ դու նիտ անոր քով: Գրէ՝ բայ է. անուն-բային գորութեամբ կայ՝ դու. խնդիրն ալ գորութեամբ կայ՝ գիր. այսինքն՝ եթէ դու ալ կուգես գիր գրել,

դնա դու այն տեղն, նիստ դու անոր քով, դու գրէ գիր: Եւ այս տեղս կերեւի որ անուն-բային այսպիսի տեղանքս զօրութեամբ մնալն լաւ է, քան թէ ներդործութեամբ դնելն. քանզի անհամ կու լինի շարադրութիւնն:

161. Դարձեալ՝ զխոնալ պէտք է որ շարադրութեան եւ խօսից մէջ, երբեմն բայն շատ անուն նոյն հոլովով իրեն խնդիր կառնէ. եւ անոնք պիտի իրրեւ մէկ խնդիր համարեն, ինչպէս այս. Աստուածատրէ եղբայրն այսօր գնեց | երկու մեծ ձուկ, տասն հաւ, երեսուն հաւկիթ. եւ երեք ձկնորդ: Ահա այս բանիս մէջ, եղբայրն՝ անուն-բայի է. Աստուածատրն՝ տեղական հոլով՝ յատկացուցիչ է եղբորն. այսօրն՝ մակբայ է. գնեցն՝ բայ է. եւ ձուկն, հաւն, հաւկիթն եւ ձկնորդն, իրր մէկ հայցական խնդիր են բային. երկուն, մեծն, տասն, երեսունն եւ երեքն՝ են ածական, բայի խնդիր եղող անըններուն:

162. Եւ այս տեղս զխոնալ պէտք է որ երբ բայն այսպէս շատ անուն խնդիր կառնու, այն անըններուն մէջ ստորակէտ դուրի պէտք է. եւ յետի անընէն յառաջ՝ դնել պէտք է նաեւ զայս շաղկապն՝ եւ, ինչպէս որ օրինակին մէջ կերեւի:

163. Դարձեալ՝ զխոնալ պէտք է որ խօսից եւ շարադրութեան մէջ, շատ անգամ անցած անունն կամ խօսքն յառաջ բերուիլ պէտք կու լինի. եւ այս դերանունս՝ որ մէջ կու մտնու եւ յառաջ կու բերէ. նորա համար՝ այսպիսի որն՝ յարաբերական կասելի, եւ ո՛չ շաղկապ, կամ հարցական: Քանզի շաղկապ եղած որն՝ անցած բանն նոր եկած բանին հետ կու միաւորէ. եւ հարցական որն՝ կա՛մ որոնելու կերպով, կա՛մ ընտրելու կերպով խօսից մէջ կու մտնէ: Եւ ահա այս տեղս, օրինակի համար, մէկ բան մի կու դնենք, եւ քակելով ցոյց կու տանք, որ անով երեւի թէ ո՛րն է յարաբերական որն, եւ ո՛րն է շաղկապ որն, եւ ո՛րն է հարցական որն: Աստուած, որ գեթ ստեղծեք է բանական, միշտ կու կամի որ բանականութեամբ եւ խելով կենցաղավարիս. եւ ո՛ր գործքն է բանաւոր եւ խելօք՝ գայն գործես: Ահա այս բանիս մէջ, Աստուածն է անուն-բային | որն՝ է յարաբերական, եւ զԱստուած կու յարաբերէ, եւ ինքն կու լինի անուն-բայի: Ստեղծեք՝ է բայ. գեթն՝ հայցական խնդիր բային. բանականն՝ է ուղղական անուն, երկրորդ խնդիր բային: Եւ այս տեղս խօսքն անկատար է, եւ ստորակէտ պիտի դուրի: Միշտն է մակբայ. կու կամին՝ է բայ: Անուն-բային զօրութեամբ կայ, Աստուած: Խնդիր բային ալ զօրութեամբ

է՛ գայս: Այս տեղս ալ տակաւին բանն անկատար է, եւ ստորակէտ պիտի դուրի: Որն է շաղկապ. ինչպէս թէ ասէանք՝ զի: Անուն-բային զօրութեամբ կայ՝ դու: Կենցաղավարիսն է բայ: Բանականութեամբ եւ խելովն՝ է գործիական հոլովով խնդիր բային: Եւ այս տեղս խօսքն կատարեցաւ. նորա համար՝ միջակէտ պիտի դուրի: Եւն՝ է շաղկապ: Որն՝ է հարցական անուն գործքին: Գործքն՝ է անուն բային: Էն՝ է բայ: Բանաւորն եւ խելօքն՝ են խնդիր բային: Գործեսն է բայ. անուն-բային զօրութեամբ է՝ դու. գայնն՝ է հայցական խնդիր բային:

164. Այս տեղս զխոնալ պէտք է որ թէպէտ յարաբերական որն, մեր զրաբառ լեզուին մէջ, նաեւ երբ կու հոլովի եւ յողմական է, անցած անունն յառաջ կու բերէ, բայց այս աշխարհաբար լեզուիս մէջ, միշտ ուղղական եւ եղակի մնալով՝ անցած անըններ յառաջ կու բերէ. եւ հարկաւոր տեղն երբ հոլովիլ պէտք լինի, իւր հետ կառնու զայս դերանունս՝ ան կամ իր. եւ սոքա կու հոլովին եւ յողմական կու լինին, եւ ինքն անխախտ կու մնայ, ինչպէս որ ահա, օրինակի համար կու դնենք այս տեղս, եւ զրաբառն այլ հետն կու | դնենք՝ որ լաւ իմացի:

ԵԶԱԿԻ Ուղղական

(Աշխ.) Ան մարդն՝ որ ձին առաւ, մեռաւ:

(Գրք.) Մարդն այն՝ որ էառ զձին, մեռաւ:

Սեռական

(Աշխ.) Ան մարդն՝ որ անոր էր ձին, մեռաւ. կամ
Ան մարդն՝ որ իր էր ձին, մեռաւ:

(Գրք.) Մարդն այն՝ որոյ էր ձին, մեռաւ:

Տրական

(Աշխ.) Ան մարդն՝ որ անոր տւի զիմ ձին, մեռաւ. կամ
Ան մարդն՝ որ իրեն տւի զիմ ձին, մեռաւ:

(Գրք.) Մարդն այն՝ որում ետու զձին իմ, մեռաւ:

Հայցական

(Աշխ.) Ան մարդն՝ որ ձին զնեղինի տեսայ, մեռաւ:

(Գրք.) Մարդն այն՝ զոր տեսի մինչ զնէր զձի, մեռաւ:

Բացառական

(Աշխ.) Ան մարդն՝ որ անկից առի զայս ձիս, մեռաւ. կամ
Ան մարդն՝ որ իրմէ առի զայս ձիս, մեռաւ:

(Գրք.) Մարմն այն՝ յորմէ առի զայս ձի, մեռաւ:

Գործիական

(Աշխ.) Ան գաւաթն՝ որ անով ջուր կու խմէի, կոտորեցաւ:

(Գրք.) Բաժակն այն՝ որով ըմպէի զջուր, բեկաւ:

ՅՈՒՆԱԿԻ Ուղղական

(Աշխ.) Ան մարդիքն՝ որ ձեր հետ խօսեցան, ընծի ճանչուր էին:

(Գրք.) Մարդիքն այնքիկ՝ որք ընդ ձեզ խօսեցան, ծանօթք էին
ինձ:

Սեռական

44p (Աշխ.) Ան մարդիք՝ որ անոնց տներն էրէցան, խիստ լացին:

Ան մարդիքն՝ որ իրենց տներն էրէցան, խիստ լացին:

(Գրք.) Մարդիքն այնքիկ՝ որոց տունքն այրեցան, յոյժ լացին:

Տրական

(Աշխ.) Ան մարդիքն՝ որ անոնց տուրի զըր ձին, փախան:

Ան մարդիքն՝ որ իրենց տուրի զըր ձին, փախան:

(Գրք.) Մարդիքն այնքիկ՝ որոց ետուր զձին քո, փախան:

Հայցական

(Աշխ.) Ան մարդիքն՝ որ կու սիրէի, ընծի թշնամի եղան:

Ան մարդիքն՝ որ զիրենք կու սիրէի, ընծի թշնամի եղան:

(Գրք.) Մարդիքն այնքիկ՝ զորս սիրէի, թշնամի եղեն ինձ:

Բացառական

(Աշխ.) Ան մարդիքն՝ որ անոնցմէ կու փախչէի, դէմս ելան:

Ան մարդիքն՝ որ իրենցմէ կու փախչէի, դէմս ելան:

(Գրք.) Մարդիքն այնքիկ՝ յորոց փախչէի, ընդ առաջ իմ ելին:

Գործիական

(Աշխ.) Ան ամբններն՝ որ անոնցմով կերակուր կուտէանք, կոտորեցան:

(Գրք.) Անօթքն այնք՝ որովք ուտէաք զկերակուր, խորտակեցան:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թէ ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ ԿՈՒ ԱՐԳԵԼԻԻՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

165. Դարձեալ գիտնալ պէտք է՝ զի երբեմն բայերն, որ իրենց բնութեան յարմար խնդիր պիտի առնուն, աներեւոյթ բայն առնուին կընկնի, եւ չեն առնուր | զիրենց խնդիրն, եւ այնպէս աներեւոյթ բայն ինչ խնդիր որ կուզէ, նոյն կու դուրի, ինչպէս ահա այս օրինակիս մէջ կերեւի. Ես կու կամէի տալ քեզ խրատ, բայց դու սկսար տուն գնալ. նորա համար ես ալ չեմ յօժարիր քերանս բանալ: Ահա այս տեղս, Եսն՝ անուն-բային է. կամէին՝ բայ է, եւ իրեն հայցական խնդիր պէտք էր, բայց աներեւոյթ բայն առնուին գալով՝ իր հայցական խնդիրն չի դուրի: Տալն՝ է աներեւոյթ բայ, եւ իրեն հայցական խնդիրն է՝ խրատն, եւ տրական խնդիրն է՝ քեզն: Բայցն է չաղկապ. դուն՝ անուն-բայի. սկսարն՝ է բայ. գնալն՝ է աներեւոյթ բայ, որ կու արգելու սկսար բային խնդիրն, եւ ինքն իր բնութեան յարմար խնդիր կառնու՝ տունն, որ է զօրութեամբ նախդրիւ տրական: Նորա համարն՝ է չաղկապ. եսն՝ անուն-բայի. ալն՝ չաղկապ. չեմ յօժարիրն՝ է բայ. բանալն՝ է աներեւոյթ բայ, որ կու խափանէ չեմ յօժարիր բայի խնդիրն. եւ քերանն՝ է հայցական խնդիր աներեւոյթ բային:

166. Եւ գիտնալ պէտք է, որ ինչպէս բայի խնդիրն շատ տեղ բայէն յառաջ կու լինի, այսպէս ալ աներեւոյթ բայերու խնդիրներն իրենցմէ յառաջ կու ընկնին. եւ զգուշանալ պէտք է՝ որ չկարծուին թէ մէկալ բայերուն խնդիր են, զոր օրինակ այս բանս. Չեմ յօժարիր քերանս բանալ. այս անունս՝ քերան, աներեւոյթ բային խնդիր է, եւ ոչ թէ՝ չեմ յօժարիր բային:

167. Դարձեալ գիտնալ պէտք է, որ երբեմն բային առջեւ մէկ բոլոր բան մի կու դալ, եւ բային խնդիրն կու խափանի. եւ այն բոլոր բանն է իբրեւ խնդիր այն բային, ինչպէս այս օրինակովս կերեւի: Պետրոսն ասաց. Եկո՛ւ մէկտեղ մատիմք, համարնիս կարդամք: Ահա այս տեղս, Պետրոսն՝ անուն-բայի է. ասացն՝ բայ. եւ իրեն խնդիր եղեր է այս բոլոր բանս. Եկո՛ւ մէկտեղ մատիմք, համարնիս կարդամք: Դարձեալ՝ այս բանիս մէջ անուն-տիմք, համարնիս կարդամք: Դարձեալ՝ այս բանիս մէջ, անուն-բային զօրութեամբ կայ՝ մեմք. մէկտեղն՝ է մակբայ. մատիմքն՝ է բայ, եւ իրեն խնդիր եղեր է այս բանս.

համարմիս կարդանք: Եւ այս բանին մէջ, անուն-բային զօրութեամբ կայ՝ մեմք. կարդանք՝ է բայ. համարմիս՝ է հայցական խնդիր բային:

168. Եւ այս վանկս նիս զօրութեամբ է, փոխանակ ասելոյ մեր, ախինքն՝ զմեր համարմ կարդանք. որպէս եւ այլ շատ տեղ կու հանդիպի, մեր աշխարհաբար լեզուին մէջ, այս վանկս՝ նիս, որ զօրութիւն մերի ունի, ինչպէս ասոնք. զլիսնիս բանանք, ախինքն՝ զմեր գլուխն, տներնիս եկաւ, այսինքն՝ մեր տունն. բերնն-նիս ցամաքեցաւ, այսինքն՝ մեր բերանն:

Եւ ասոր պէս պիտի իմացւին նաեւ ասոնք. զլիսնիդ, այսինքն՝ ձեր գլուխը, զլիսնիմ՝ այսինքն՝ անոնց գլուխը:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԹԵ ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ԻՄԱՅԻԻ, ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ,

ԱՆՈՐՈՇ ՏՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ:

169. Նախ գիտնալ պէտք է՝ որ մեր աշխարհաբար լեզուին ^{46ա} ուղղական անունն եւ հայցականն եւ զօրութեամբ նախդրիւ տրականն, շարադրութեան մէջ, իրարու այնքան չեն զանազանիր. եւ պէտք է որ բանին ուժովն իմացւի անոնց զանազանութիւնն: Քանզի շատ անգամ եք (ը) գրով վերջացող անուններն հայցական չեն, այլ ուղղական են, ինչպէս այս խօսքիս մէջ կերեւին. Հացը փռան մէջ մնաց, հայրը տուն եկաւ, եղբայրը դուրս ելաւ: Եւ այս տեղս հացն՝ է անուն-բայի, մնացն՝ բայ, մէջն՝ նախադրութիւն, փռանն՝ խնդիր նախադրութեան. եւ երկուքն միատեղ խնդիր բային: Հայրն՝ անուն-բայի, եկան՝ բայ, տունն՝ խնդիր բայի, զօրութեամբ նախդրիւ տրական: Եղբայրն՝ անուն-բայի. ելան՝ բայ, դուրսն՝ խնդիր բայի, զօրութեամբ նախդրիւ տրական: Եւ այսպիսի տեղս եքն (ը) դէմք որոշելու համար կու դուրս ուղղական անունին վերայ:

170. Դարձեալ՝ շատ անգամ եք (ը) գրով վերջացող անուններն նախդրիւ տրական են, ինչպէս ասոնք. Պետրոսն լաթերը հանեց՝ գետինը ձգեց, եւ ապա ինքն զինքն ծովը նետեց: Ահա այս տեղս, Պետրոսն՝ է անուն-բայի. հանեցն՝ է բայ. լաթերն՝ հայցական խնդիր բային. ձգեցն՝ է բայ. անուն-բայի զօրութեամբ կայ՝ Պետրոս. եւ զօրութեամբ կայ հայցական խնդիր՝ լաթերը:

գետինը՝ է զօրութեամբ նախդրիւ տրական, որ է երկրորդ խնդիր բային. ապան՝ է շաղկապ. ինքն՝ է անուն-բայի. նետեցն բայ. զինքն՝ հայցական խնդիր բային. Ծովը՝ զօրութեամբ նախդրիւ ^{46բ} տրական, որ է երկրորդ խնդիր բային:

Եւ այս տեղս գիտնալ պէտք է որ շատ անգամ կու հանդիպի որ զօրութեամբ տրական անունն իր վերջն եք (ը) չունի, ինչպէս այս խօսքիս մէջ կ'երեւի. Ես գտեց ժամ զրկեցի. եւ դուք բաղնիք գացիք: Ահա այս խօսքիս մէջ, ժամն եւ բաղնիքն զօրութեամբ նախդրիւ տրական են, եւ իրենց վերջն եք (ը) չունին:

171. Դարձեալ՝ շատ անգամ եք (ը) գրով վերջացող անուններն բացորոշ հայցական են, ինչպէս այս օրինակովս կերեւի. Մեմք մեր հացը կերանք, ձեր բանը հոգացանք, անոնց արածը շինեցանք: Եւ այս տեղս, մեմք՝ է անուն-բայի. կերանքն՝ բայ. հացը՝ հայցական խնդիր բայի, մերն՝ ածական հացին: Հոգացանքն բայ. անուն-բայի՝ զօրութեամբ կայ, մեմք. բանը՝ հայցական խնդիր բայի. ձերն՝ ածական բանին: Շինեցանքն՝ բայ. անուն քային զօրութեամբ կայ՝ մեմք. արածը՝ հայցական խնդիր բային. անոնց՝ յատկացուցիչ արածին:

172. Դարձեալ՝ շատ անգամ ալ կու հանդիպի որ հայցական անունն իր վերջն եք (ը) չունի, եւ անորոշ հայցական կառուցի, ինչպէս ահա այս օրինակովս կերեւի. Երկու մարդ տեսայ, որ ծովը մտնէին, ձուկ կու բռնէին. եւ աման չունէին՝ որ բռնած ձկները մէջը դնէին: Ահա այս բանիս մէջ, Տեսայ՝ է բայ. անուն-բային զօրութեամբ կայ՝ եւ. մարդն է անորոշ հայցական խնդիր բային. երկուն՝ է ածական մարդուն. որն է յարաբերական, եւ ^{47ա} երկու մարդն յառաջ կու բերէ, եւ անուն-բայի կու լինի. | մտնէին՝ է բայ. ծովը՝ զօրութեամբ նախդրիւ տրական եւ խնդիր բային. բռնէին՝ է բայ. անուն-բային զօրութեամբ կայ՝ յարաբերական որն. ձուկն՝ է անորոշ հայցական խնդիր բային. եւն՝ է շաղկապ. չունէին՝ է բայ. անուն-բային զօրութեամբ կայ՝ անոնք. ամանն՝ է անորոշ հայցական խնդիր բային. որն՝ է շաղկապ. դնէին՝ է բայ. անուն-բայի զօրութեամբ կայ՝ անոնք. ձկները՝ է բացորոշ հայցական խնդիր բային. բռնածն է ածական ձկնե-րուն. մէջը է նախադրութիւն, եւ իր խնդիրն զօրութեամբ կայ՝ անոր, այսինքն՝ անոր մէջը:

173. Եւ վերջապէս այս բանիս վերայ գիտնալ պէտք է՝ որ եք (ը) գիրն անուններուն վերջն միշտ բացորոշելու համար կու

դուրի, այս մեր աշխարհաբար լեզուին մէջ. նորա համար, չարա-
դուրութեան եւ խօսից մէջ, անունն՝ թէ՛ ուղղական լինի, թէ՛ գո-
րութեամբ նախդրիւ տրական եւ թէ՛ հայցական, եթէ բացորոշե-
լու պիտանաւորութիւն ունինէ, եթ (ը) գիրն կառնու. եւ թէ չու-
նինէ, առանց եթ (ը) գրի կու մնայ, եւ ինչ բայի որ խնդիր և-
ղերէ, այն բային ուղած խնդիրն հայելով՝ պիտի իմացւի նոյն
անունն ուղղական լինիլ, կամ նախդրիւ տրական եւ կամ հայցա-
կան, ինչպէս ահա այս երկու օրինակիս մէջ կերեւին. Այն մարդը
իր հացը ծովը ձգեց: Ահա այս տեղս, մարդը՝ ուղղական անուն-
բայի է. հացը՝ հայցական խնդիր բայի է. եւ ծովը՝ գորութեամբ
նախդրիւ տրական, երկրորդ խնդիր բայի է: Եւ ամէնքը եթ (ը)
գիր ունին, զի բանն բացորոշ կերպով է:

174. Դարձեալ այս բան՝ Թէ կուգես սուրբ լինիլ, միշտ վա-
47բ տրկած ըստրկիդ տասա|նորդովմ հաց գնէ, աղփատներում բաժնէ:
Ահա այս տեղս, Թէն շաղկապ է. անուն-բայի՝ գորութեամբ կայ,
դու. կուգեսն՝ բայ. լինիլն՝ աներեւոյթ բայ, որ կուգես բային
խնդիրն կարգելու, եւ ինքն իրեն խնդիր կառնու՝ սուրբն, որ է
ուղղական. միշտն՝ է մակբայ. անուն-բայի գորութեամբ կայ՝
դու. գնէ՝ բայ. հաց՝ անորոշ հայցական. տասամորդովմ՝ եր-
կրորդ խնդիր. ստրկիդ՝ յատկացուցիչ. վաստկածն՝ ածական
ստրկիմ. բաժնէ՝ բայ. անուն-բայի գորութեամբ կայ՝ դու. աղ-
փատներում՝ տրական խնդիր բային: Եւ ահա այս տեղս հայցա-
կան խնդիրն հաց՝ եթ (ը) չունէր, զի բանն անորոշ կերպով է:

175. Դարձեալ գիտնալ պէտք է՝ որ այս գիրս եթ (ը) երբեմն
զսեռական հոլովն ալ կու բացորոշէ, ինչպէս այս խօսքովս կե-
րեւի. Ձկանը տէրն եկաւ: Ահա այս տեղս, ձուկն՝ սեռական է եւ
եթով (ը-ով) բացորոշեցաւ: Իսկ զտրական հոլովն միշտ կու բաց-
որոշէ, ինչպէս որ առաջին գրքին մէջ յայտնի է:

176. Բայց միշտ պէտք է գիտնալ, զի եթն (ը գիրը) կու բաց-
որոշէ զայն անըններն, որ բաղաձայն գրով կու վերջանան, ինչ-
պէս՝ հացը, ձկանը եւայլն: Բայց երբ որ անըններն ձայնաւոր
գրով կու վերջանան, միշտ մու գրով կու քացորոշւին, ինչպէս
քահանան հացին, մատնին, եւայլն:

177. Դարձեալ գիտնալ պէտք է՝ որ մեր աշխարհաբար լեզ-
ուին մէջ, ներգոյական հոլովն չի այնքան քանիր, ինչպէս որ գրա-
48ա բառ լեզուին մէջ կու քանի. եւ պատճառն այս է, որ այս երկու
նախդրութիւնս՝ մէջ, վրայ, երբ որ սեռական խնդիր կառնուն,

ներգոյականի գորութիւն ունին. եւ ասոնք կիր կառնւին ներգո-
յականի տեղ, զոր օրինակ. Երբ գրաբառ ասենք՝ իմքն մերկ մստի
ի գետնոջ, եւ գորամն իւր պահէ ի քսակոջ. աշխարհաբար այս-
պէս կըսւի. իմքն մերկ գետնի վրայ կու մստի, ու ըստակը քսակի
մէջ կու պահէ:

178. Դարձեալ՝ շատ անգամ ալ կու հանդիպի որ առանց այս-
պիսի նախդրութեան ներգոյական հոլովն շարադրութեան մէջ
կերեւի. եւ բանին գորութեամբն պիտի իմացւի, զի ուղղական
անունն պէս է, եւ իր վերջն կա՛մ եթ (ը) ունի, կա՛մ մու, ինչ-
պէս որ ահա այս խօսքերուս մէջ կերեւի. Ես եկեղեցին էի. Պե-
տրոսն տունն էր. դուք քաղաքը կու կենայիք, մեք՝ գեղը. անոնք
գետնին կու մստէին, դուք՝ աթոռը. Թէ դու տունը մնաս, ես ալ
աս տեղս կու մնամ, եւայլն: Ահա այս խօսքերուս մէջ եղած ա-
նըններն ամէնն գորութեամբ ներգոյական են եւ ո՛չ անուանական,
կամ նախդրիւ տրական, կամ հայցական: Եւ գիտնալ պէտք է
որ քիչ բայեր կան այսպիսի ներգոյական հոլով խնդրող:

179. Դարձեալ գիտնալ պէտք է, զի ի մէջ շարադրութեանց
այս մասունքներս երբ, երբ որ, եթէ, թէ, թէ որ, շատ անգամ
կու պահանջեն այնպիսի բայեր, որ իրենց հետ ունենան զայս մաս-
նիկս մէ, զոր օրինակ. Երբ որ գաւ մէ՝ գիրգն հետդ բեր: Թէ որ
չգաւ մէ, քոյ մնայ: Եւ այս մասնիկս մէ, ինչ բայի հետ որ լինի,
դրայն ստորակցական եղանակի մէջ կու մտցնէ, ինչպէս ահա
խօսքերուս մէջ կերեւի՝ ի գրաբառն դարձնելով.

(Աշխ.) Եթէ տեսնեմ մէ, կու խօսիմ:

(Գրք.) Եթէ տեսանիցեմ, խօսիմ:

(Աշխ.) Թէ որ տեսերէի մէ, կու խօսէի:

(Գրք.) Եթէ տեսեալ իցէի, խօսէի:

(Աշխ.) Երբ որ հայրդ գայ մէ, ասես իրեն, որ թէ կու կամի մէ՝
գայ ընձի:

(Գրք.) Յորժամ գայցէ հայր քո, ասացես ինքեան, զի եթէ կա-
միցի՝ եկեսցէ առ իս:

Résumé

L'APPORT DE L'ABBÉ MEKHITAR
A LA FORMATION DE LA LANGUE ARMÉNIENNE MODERNE

(Suite, v. «Bazmavep» 1978, Nos 3-4, pp. 302-327)

(P. NERSES DER-NERSESSIAN)

L'Auteur continue son étude nous proposant l'analyse détaillée des trois derniers chapitres de la Grammaire de l'Abbé Mekhitar (éd. Venise 1727, pp. 78-90, en langue turque, mais en caractères arméniens), et il souligne des particularités morphologiques et orthographique dans la formation des prépositions, des adverbies et des conjonctions, en arménien moderne, mettant toujours en évidence l'esprit d'avant-garde dont fait preuve Mekhitar dans le choix des formes grammaticales.

L'A. passe ensuite à étudier en détail les 137 propositions, données par Mekhitar en arménien moderne, comme partie pratique de sa Grammaire; il présente, en douze points, ses animadversions, qui lui permettent de conclure positivement sur le rôle éminent que Mekhitar a eu dans la formation du caractère littéraire de la langue arménienne moderne.

A la fin, nous proposant les étapes suivantes de son étude, l'A. publie, pour la première fois, le texte entier et original de la Grammaire de la langue arménienne moderne, écrite par Mekhitar, en 1726-1727, complètement en arménien moderne. La nouvelle Grammaire est divisée en deux parties; la première (pp. 125-227) traite de la morphologie, la deuxième de la syntaxe de l'arménien moderne (pp. 227-261). C'est dans cette deuxième partie qu'on aperçoit principalement l'esprit clairvoyant de Mekhitar, sa connaissance profonde de la langue et de sa composition logique, sa sagacité pénétrante dans les questions des concordances.

La fondation de la langue arménienne moderne est plus ou moins parfaite, déjà en 1727; mais on devra attendre encore plus d'un siècle pour sa totale diffusion dans la nation.

Ի ՊԱՏԻԻ

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԱՐԲԱՆԱԳՐ ՊԵՏՐՈՍ Ա. ԱՐԾԻԻԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԺԻ

ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՈԳԵԿՈԶՈՒՄ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԷԶ

(30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1979)

Մի խթանի վրա Հայերու Ս. Ղազարու Հայկական Կառնի աղանդական դասիկին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական նիստ, 1979ի Դեկտեմբեր 30ին, ոգեկոչելու համար Երջանկայիշատակ Արքաեաթ Պետրոս Ա. Արծիւեան Կաթողիկոս-Պատրիարքի ծննդեան 300ամեայ յորեկեանը, որ հանդիսաւորապէս տօնուեցաւ 1979ի ընթացքին՝ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան այլեւայլ Հաստատութիւններուն կողմէ:

Նիստին նախագահեց Միաբանութեան Ընդհ. Արքաեայրը՝ Գեր. Հ. Պօղոս Վրդ. Ամանեան, ի ներկայութեան վանաքմալ բոլոր Հայերուն:

Օրումն գլխաւոր բանախօսն էր Հ. Սահակ Վրդ. Ճեմնեմեան, որ հանդէս եկաւ շահեկան ուսումնասիրութեամբ մը՝ Արծիւեան Կաթողիկոս-Պատրիարքի գործունէութեան շուրջ, ծանրանալով յատկապէս անոր եւ Միաբար Արքաեաթ միջեւ տեղի ունեցած ամենական յարաբերութիւններուն վրայ, քաղելով Ս. Ղազարու դիւանական վաւերաթուղթերուն մէջ պահուած բազմաթիւ նիւթերէ, ինչպէս Արծիւեան Կաթողիկոսի ինը մամակները եւ ժամանակակից այլ անձերու գրութիւնները:

Սոյն բանախօսութիւնը, վերամշակուած, լոյս կը տեսնէ այժմ «Բազմավէպ»ի ներկայ քիւին մէջ, յաւելեալ ծանօթագրութիւններով:

ԽՄԲ.